

Ա. Մուրադյան

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԼԵՋՈՒՆԵՐԻ ԱԶԳԱՑՈՒԹՅՈՒՆԸ

(Լ Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ ՈՒ Ն)

Անդրկովկասյան լեզուների մեջ առանձնապես հայոց և վրաց լեզուները հայտնի են որպես համեմատաբար հին գիր ու գրականություն ունեցող լեզուներ¹ Լեզվաբանական մի շարք նկատառումներով (որ մենք շուտով կտեսնենք) շատ կարևոր է մի կողմից՝ հայերենի (այն է՝ գրաբարի, միջին հայերենի, արգի բարբառների և գրական նոր լեզուների) և մյուս կողմից՝ քարթվելական լեզուների (վրացերենի, ճաներենի, մեգրելերենի և սվաներենի) համեմատական ուսումնասիրությունը:

Այս համեմատական ուսումնասիրությունը հնարավոր է միայն երկու լեզվի պատմության ուսումնասիրությամբ, որն իր հերթին հնարավոր է միայն պատմական քերականության միջոցով:

Պատմական քերականության բացը, եթե, այս կամ այն չափով, կարելի է լրացնել հայերենի ընդգծված կատարված բազմաթիվ (թեև մեծ մասամբ՝ միակողմանի) ուսումնասիրություններով, ապա վրացերենը (իսկ արդեն չենք խոսում կովկասյան մյուս լեզուների մասին) հայերենի չափ ուսումնասիրություններ էլ չունի: Բայց, չնայած այս հանգամանքին, հայոց ու վրաց լեզուները, ինչպես հայտնի է, գրական հուշարձանների բազմադարյան պատմություն ունեն, որը մեզանից յուրաքանչյուրին հնարավորություն է տալիս նրանց անցյալի այս կամ այն խնդիրը մոնոգրաֆիկ կերպով ուսումնասիրելու:

Հայոց և վրաց լեզուների ձևավորման մասնակաշրջանը, որ ենթադրվում է ոչ ուշ քան 6-րդ դարում (մ. թ. ա.), մի ժամանակաշրջան է, որ այնքան էլ հին չէ մարդկության գոյության, նրա լեզվի ու մեծագույն պատմության մեջ: Պարզ է, որ հայոց և վրաց ժողովուրդներից ու նրանց լեզուներից առաջ էլ, ինչպես հայտնի է, եղել են. անշուշտ, նրանց նախորդող ուրիշ, բազմաթիվ լեզուներ, որոնց խաչավորումներից ու միավորումներից ստացվել են մի կողմից հայերենը (այն է՝ գրաբարը, միջին հայերենը, արգի բարբառները և գրական նոր լեզուները) և մյուս կողմից՝ քարթվելական լեզուները (վրացերենը, ճաներենը, մեգրելերենը և սվաներենը): Սրանք, այսպես ասած, երկու յուրահատուկ լեզվախմբեր են, որոնք մի շարք առանձնահատկությունների հետ միասին՝ ամփոփում են իրենց մեջ նախորդ լեզուներից խաչավորված ու միավորված զգալի ընդհանրություններ, որոնք գալիս են հնագույն շրջաններից, ինչպես Ն. Սառն է ասում, նախա-արիական (հաբեթական) լեզուներից: Սրանով ահա հայոց և

¹ Մեր թվականության 5-րդ դարի առաջին շրջանից, ինչպես հայտնի է, սեղծվել է մեր գիր ու գրականությունը:

վրաց լեզուները, ինչպես միշտ առաջ է քաշել Ն. Մառը, ազգակից եմ իրար:

Հայոց և վրաց լեզուների ձևաբանական ազդակցությունները դրսև-վորվում են ինչպես բառերով ու բառարմաներով, այնպես էլ բառաստեղ-ծական և բառաթեքական մասնիկներով ու վերջավորություններով: Բա-ռաստեղծական և բառաթեքական ընդհանրությունները ավելի ամուր ու հաստատուն են լեզուների ազդակցության համար, քան թե բառական ընդհանրությունները: Եվ դա հասկանալի է. հայտնի է, որ ընդհանրապես մասնիկների, ածանցների ու թեքման վերջավորությունների փոխանցում-ները լեզուների մեջ դրեթե չեն կատարվում, այլ դրանք զերազանցապես լեզվախաչավորումների ու ներթափանցումների արդյունքն են, որ դալիս են վաղագույն շրջաններից, նախորդ, նրանց մեջ խաչավորված լեզու-ներից:

Իսկ ընդհանրապես լեզվի բառապաշարը համեմատաբար ավելի շատ գյուրափոփոխ է. քաղաքական և կուլտուրական ազդեցությամբ առանձին բառերը կարող են անցնել լեզվից լեզու և յուրացվել. այս տեսակետից էլ երկրի երեսին չկա ե մի լեզու կամ ժողովուրդ, որ մաքուրը, «իբ սեփա-կան» բառապաշարն ունենա. բառերն, այսպես ասած, «թափառաշրջիկ» են, ուստի դժվար է հաճախ դրանք այս կամ այն լեզվի սեփականու-թյունը համարել: Ձեռնած այս հանգամանքին՝ տարրեր լեզուներում կա-րող են նաև հնագույն ժամանակներից բառեր ու բառարմատներ լինել, որոնք արտահայտում են մարդկային հնագույն բարք ու վարքը, հատկա-պես սեռային և ազգակցական կապերն ու հարաբերությունները, ամենա-սկզբնական տնտեսաձևը և վերջապես սկզբնական հավատն ու աշխարհա-յացքը: Մարդկանց սկզբնական և հնագույն տնտեսական զբաղմունքը, սակայն, որսորդությունն ու անասնապահությունն էր, ինչպես նաև՝ ան-տառային և վայրի բույսերով սնվելու մասին նրանց հոգատարությունը: Հողագործության մյուս առաջավոր բնագավառները, ինչպես հայտնի է, կուլտուրայի ավելի բարձր աստիճան են ներկայացնում: Այս պատճառով էլ համապատասխան նյութը պետք է որոնել սկզբնական ազգակցական հարաբերությունների, կենդանական աշխարհի և անասնապահության, ինչ-պես նաև՝ պտուղ-բույսերի և սկզբնական հողագործության բնագավառի մտածողության հետ կապված անունների և բառ-արտահայտությունների մեջ:

Հայտնի է, որ ընդհանուր լեզվաստեղծական պրոցեսում լեզվի ձևա-բանական միավորներն ավելի են մոտեցել իրար, խառնվել ու խաչավոր-վել, քանի որ լեզվակիր հասարակությունները լեզվական ավելի մեծ կո-լեկտիվներ են կաղմել: Այդ ընթացքում է, որ աշխարհիս երեսին տասնյակ կամ զուցե հարյուր հազարավոր լեզուներից այժմ մնացել են մոտ երկու հազար լեզուներ ու բարբառներ:

Այսպիսով, ուրեմն, լեզուների շատությունից պատմականորեն, ինչ-պես հայտնի է, եկել ենք դեպի լեզուների քչությունը. սա լեզվամտածո-ղական մի այնպիսի երևույթ է, որը դժվար է պատկերացնել առանց լե-զուների ներթափանցումների, խաչավորումների և միավորումների. այս ուղիով, այն է՝ լեզուների ներթափանցումների և խաչավորումների ուղիով, բնականաբար, այս կամ այն չափով, անցած պետք է լինեն աշխարհի

բոլոր լեզուները, այդ թվում, իրենց յուրահատուկ պայմաններով հանդերձ, նաև ընդհանրապես կովկասյան և մասնավորապես անդրկովկասյան լեզուները։ Այս ուղիով միայն, շնորհիվ լեզվական ներթափանցումների ու խաչավորումների, որ շատ բնական են ու անխուսափելի՝ լեզվամտածողության զոյացման հենց սկզբից էլ, անշուշտ, առաջ ևն եկել, այսպես ասած, խառը կամ խաչավորված լեզուներ։

Այդ խառը լեզուների թվին են պատկանում նաև, առավել ևս, մեզ հետաքրքրող հայոց և վրաց լեզուները, անդրկովկասյան լեզուների այդ երկու յուրահատուկ լեզվախմբերը, որոնք, բազմաթիվ ընդհանրությունների կողքին, ունեն նաև իրենց լեզվամտածողական յուրահատկությունները։ Դրանք քարթվելական լեզուներում հիմնականում զրոնորվում են բայաձևների կառուցվածքի յուրահատկությամբ։ Այս տեսակետից էլ քարթվելական լեզուները մոտենում են կովկասյան մյուս լեզուներին և ընդհանրապես՝ տարբերվում հայոց լեզուներից։

Որո՞նք են այդ յուրահատկությունները։

Օրինակ՝ զրոււմ եմ» բայը, որպես անցողական բայ, ցույց է տալիս առաջին դեմքի կատարած գրելու գործողությունը մի որևէ առարկայի (=ուղիղ խնդրի) նկատմամբ։ Այս դեպքում զրոււմ եմ» ձևի մեջ արտահայտված է գործող անձի (=ենթակայի) առաջին դեմքը, այն է՝ զրոււմ եմ—ես. իսկ զրոււմ ես» բայաձևի մեջ արտահայտված է գործող անձի երկրորդ դեմքը (զրոււմ ես—դու), բայց՝ զրոււմ ե—նա։ Մենք այստեղ, իհարկե, չենք կարող տվյալ բայաձևերը և գործող անձի դեմքերը տարբեր հարաբերությամբ վերցնել. օր.՝ չենք կարող ասել՝ զրոււմ եմ—դու, կամ՝ զրոււմ ես—նա, կամ էլ՝ զրոււմ ե—ես, որովհետև, ինչպես հայտնի է, սովորաբար հայոց բայաձևերի մեջ՝ գեմքի նշանների շնորհիվ՝ արտահայտված են իրենց համապատասխան դեմքերը (=գերանունները)։ Այսպես, օրինակ՝ որ ասում ենք՝ զրոււմ եմ», այստեղ հասկացվում է, որ «ես» եմ զրոււմ, զրոււմ ես»=«դու» ես զրոււմ, «զրոււմ է»=«նա» է զրոււմ... սրա հետ միասին, այս բոլոր դեպքերում էլ՝ ես, դու, նա որ զրոււմ ենք, հասկացվում է, որ ինչ-որ մի բան ենք զրոււմ, գիցուք թե՛ նամակ, գիրք, գաս... (այն է՝ քերականական լեզվով՝ ուղղակի խնդիր, որ պահանջում են ընդհանրապես բոլոր ներգործակերպ բայերը)։ Ներգործական կերպի շնորհիվ է, որ գործող անձի և առարկայի միջև առաջ է գալիս նման հարաբերություն, և «դրել» բայն էլ, որպես ներգործակերպ բայ, ինքնին ուղղակի խնդիր է պահանջում։ Բացի սրանից՝ շարահյուսական տարբեր կապակցությունների մեջ կարող ենք հասկանալ «ես» որ մի բան (գիցուք թե՛ նամակ) զրոււմ եմ, «նա» եմ զրոււմ—«ե՛մ» եմ զրոււմ թե՛ նրա՛ն, «ե՛ք» եմ զրոււմ թե՛ նրանց... Այսպիսի դեպքերում անուղղակի խնդիրները (օրինակ՝ գերանուններ՝ «եք || ձեզ, նրան || նրանց») հայերենի (և եվրոպական մյուս լեզուների) բայաձևերում ձևաբանորեն սովորաբար չեն արտահայտվում (ինչպես, օրինակ, գործող անձի դեմքերն են արտահայտված)։ Օրինակ՝ որ ասում ենք «զրոււմ եմ», հասկանում ենք, որ ես եմ զրոււմ (շնորհիվ առաջին դեմքի նշանի՝ -մ)։ այստեղ հասկացվում է նմանապես, որ ես մի քան եմ զրոււմ (շնորհիվ ներգործական կերպի), բայց թե ում եմ զրոււմ («եք եմ զրոււմ թե՛ նրան, «ե՛ք» եմ զրոււմ թե՛ նրանց), այդ անկարելի է որոշել հյ. զրոււմ եմ» բայաձևից։ Այսպես են ընդհանրապես հայերեն բայաձևերը, այսպես

են նաև եվրոպական լեզուների բայաձևերը: Սակայն այսպես չեն կովկասյան և մասնավորապես քարթվեթական լեզուների բայաձևերը: Սրանց մեջ, շնորհիվ անուղղակի օրեկտի ձևանիշների, հասկացվում է, որ մի բան գրում եմ, ո՛ւմ եմ գրում—*ֆե՛զ եմ գրում թե՛* նրան, *ձե՛զ եմ գրում թե՛* մրա՛նց... Վերցնենք մի քանի բայաձևեր. օրինակ՝ վրացերեն *գ-წერ* (գ-ծեր) նշանակում է *«ես ֆեզ գրում եմ մի բան»*, *գ-წერთ* (գ-ծեր-ք)՝ *«ես ձեզ գրում եմ մի բան»*. *ց-ձ-წեր* (վ-հ-ծեր)՝ *«ես նրան գրում եմ մի բան»*, *ց-ձ-წერთ* (վ-հ-ծեր-ք)՝ *«ես նրանց գրում եմ մի բան»*. *կամ թե չէ՝ ց-წեր* (մ-ծեր)՝ *«դու իմ գրում ես մի բան»*, *ց-წერთ* (մ-ծեր-ք)՝ *«դուք ինձ գրում եք մի բան»*. *ս-հոր* (ս-ծեր)՝ *«դու նրան գրում ես մի բան»*, *ս-դერთ* (ս-ծեր-ք)՝ *«դուք նրան գրում եք մի բան»*. *թ-წեր-ս* (մ-ծեր-ս)՝ *«նա ինձ գրում է մի բան»*, *թ-წեր-ց* (մ-ծեր-ց)՝ *«նրանք ինձ գրում են մի բան»*, *ցց-წեր-ս* (զվ-ծեր-ս)՝ *«նա մեզ գրում է մի բան»*, *ցց-წեր-ց* (զվ-ծեր-ց)՝ *«նրանք մեզ գրում են մի բան»*... և այլն, և այլն:

Այստեղ՝ վրացերեն բայաձևերում, ինչպես տեսնում ենք, առանձին ձևանիշներով արտահայտված են ինչպես գործող անձի (=սուբեկտի) գեմ-քերը (որ սովորաբար արտահայտվում են և հայերենում), այնպես էլ խոնգրի (=օբեկտի՝ ուղղակի և անուղղակի օբեկտի) դեմքերը, որով վրացերենը տարբերվում է հայերենից: Այսպիսով՝ վրացերենում կան սուբեկտիվ և օբեկտիվ կարգի բայեր. վերցնենք մի բայ, օրինակ՝ *սեմթել-* (ասծավլ-) բայերնից՝ սուբեկտիվ և օբեկտիվ կարգի ձևեր:

Սուբեկտիվ կարգի ձևերն են՝

Եզակի

ց-սեմթელი (վ-ասծավլի)՝ *«ես նրան սովորեցնում եմ մի բան»*

ձ-սեմթელი (հ-ասծավլի)՝ *«դու նրան սովորեցնում ես մի բան»*

ձ-սեմթելու-ս (հ-ասծավլի-ս)՝ *«նա նրան սովորեցնում է մի բան»*

Հոգնակի

ց-սեմթելու-տ (վ-ասծավլի-ք)՝ *«մենք նրան սովորեցնում ենք մի բան»*

ձ-սեմթելու-տ (հ-ասծավլի-ք)՝ *«դուք նրան սովորեցնում եք մի բան»*

ձ-սեմթելու-ան (հ-ասծավլի-ան)՝ *«նրանք նրան սովորեցնում են մի բան»*:

Օբեկտիվ կարգի ձևերն են՝

Եզակի

թ-սեմթելու-ս (վ-ասծավլի-ս)՝ *«նա ինձ սովորեցնում է մի բան»*

ց-սեմթելու-ս (զ-ասծավլի-ս)՝ *«նա քեզ սովորեցնում է մի բան»*

ձ-սեմթելու-ս (հ-ասծավլի-ս)՝ *«նա նրան սովորեցնում է մի բան»*

Հոգնակի

ցց-սեմթելու-ան (զվ-ասծավլի-ան)՝ *«նրանք մեզ սովորեցնում են մի բան»*

ց-սեմթելու-ան (զ-ասծավլի-ան)՝ *«նրանք ձեզ (կամ քեզ) սովորեցնում են մի բան»*

ձ-սեմթելու-ան (հ-ասծավլի-ան)՝ *«նրանք նրանց (կամ նրան) սովորեցնում են մի բան»*

Ինչպես նաև՝

գլ-անթալու-ն (գլ-ասծավի-ս)՝ «նա մեզ սովորեցնում է մի բան»

գլ-անթալու-տ (գլ-ասծավի-թ)՝ «նա մեզ սովորեցնում է մի բան»

և այլն:

Քարթվելական լեզուների բայական այս յուրահատուկ կառուցվածքը հիմնականում պայմանավորված է նաև շարահյուսական-կապակցական մի շարք ուրիշ առանձնահատկություններով, որոնցով, ինչպես արդեն ասացի, վրաց լեզուները տարբերվում են հայոց լեզուներից: Այս տարբերությունը, այսպես ասած, երկու լեզվախմբերի սուրեկաի կողմից օրեկտի նկատմամբ կատարված գործողության տարբեր դրսևորումներն են բայաձևերի մեջ: Այսպիսով՝ քարթվելական լեզուների բայաձևերն իրենց կառուցվածքով համեմատաբար շատ բարդ են ու յուրահատուկ: սրանք, եթե կարելի է ասել, բառ-նախադասություններ են, բայաձևեր, որոնք կարող ենք ամբողջ նախադասությամբ թարգմանել. այսպես, օրինակ՝ վրացերեն *გ-აოტ-ყამ* (գ-արտղ-ամ) նշանակում է՝ «ես քեզ խփում եմ մի բան», *გ-ათრევ* (գ-աթրև) = «ես քեզ քաշ եմ տալիս»: *შ-არბ-ენი-ებ* (մ-արբ-ենին-եր) = «դու ինձ ստիպում ես, որ ես վազ տամ»: *გ-ატირებ* (գ-ատիրեր) = «ես քեզ կլացացնեմ», *გ-გ-აშლ-ევი-ებ* (գա-գ-աշլ-եվին-եր) = «ես քեզ փռել կտամ...» և այլն, և այլն:

Եուրահատկություններից մեկն էլ, այսպես ասած, պատկանելիության դրսևորումն է վրաց բայաձևերում (անցողական բայաձևերում), որոնց մեջ ցույց է տրված, թե ենթական գործողությունն ունի համար է կատարում, իրեն համար, թե՛ մի ուրիշի. այլ կերպ ասած՝ ուղիղ խնդիրը (= առարկան), որի նկատմամբ ենթական կատարում է իր գործողությունը, ունի է պատկանում, իրեն՝ ենթակային, թե՛ մի ուրիշի (— անուղղակի խնդրի): Վրաց բայաձևերի այս առանձնահատկությունը, որը դրսևորվում է *-ი-ի-* և *-ე-(-ის)* ձևանիշներով (միաժամանակ սուրեկաի և օրեկտի գեմքի նշանների առկայությամբ), հայերենում արտահայտվում է սովորաբար մի այլ (յուրահատուկ) առանձնահատկությամբ, այն է՝ անունների հետ հանգիս եկող, այսպես ասած, պատկանելիություն ցույց տվող *-ս, -դ, -ն* (*||* *ը*) ստացական—դիմորոշ հոգերով. այսպես, օրինակ՝ *հյ. տուն-ս շինեցի* = վրց. *საბ-ლი ა-გ-ი-შენე* (սախլի ա-վ-ի-շենե). *հյ. տուն-դ շինեցի* = վրց. *საბ-ლი ა-გ-ი-შენე* (սախլի ա-վ-ի-շենե). *հյ. տուն-ն շինեցի* = վրց. *საბ-ლი ა-გ-ი-შენე* (սախլի ա-վ-ი-շենე)... *հյ. տուն-ս շինեցիր* = վրց. *საბ-ლი ა-მ-ი-შენე* (սախլի ա-մ-ի-շենե). *հյ. տուն-դ շինեցիր* = վրց. *საბ-ლი ა-მ-ი-შენე* (սախլի ա-მ-ი-շենե). *հյ. տուն-ը շինեցիր* = վրց. *საბ-ლი ა-მ-ი-შენე* (սախլի ա-მ-ი-շենե)... *կամ թե չէ՝ հյ. գլուխ-ս ցավում է* = վրց. *თავი მ-ტკივა*. (թավի-մ-տկիվա), *հյ. գլուխ-դ ցավում է* = վրց. *თავი გ-ტკივა* (թավի գ-տկիվա). *հյ. [ներ] գլուխ-ը ցավում է* = վրց. *თავი ს-ტკივა* (թավի ս-տկիվա < *թավի ხ-տկი-վა*)... և այլն, այլն:¹

Այս կարգի առանձնահատկությունների կողքին, որոնցով վրաց լեզուները և նրանց ուսումնասիրությունը, անշուշտ, մեծ հետաքրքրություն

¹ Յիմորայ կամ որոշիչ հոգը հայերենում (օր. *գրաբարում*), ինչպես հայտնի է, հանգիս է եկել նաև արդյ բայաձևերի հետ միացած վերջից, ինչպես, օր.՝ *գրեցու-ն* = *այն*, որ գրվեց, ասացու-ն = *այն*, որ ասվեց և այլն:

են ներկայացնում ընդհանրապես լեզվաբանության համար, կան նաև բազմաթիվ ընդհանրություններ, որոնցով վրաց լեզուները, որպես տեղական լեզուներ, սերտ ազդեցություն մեջ են, ինչպես ն. Մառն է ասում, հայոց նախա-արիական (կամ հարեթական) լեզվաշերտի հետ. սա ևս իր հերթին էլ ավելի հետաքրքրական ու անհրաժեշտ է դարձնում վրաց լեզուները և նրանց ուսումնասիրության գործը մանավանդ հայազետ լեզվաբանի համար:

Եվ ահա առաջինը ն. Մառն է, որ փաստերի ճիշտ ուսումնասիրության անհրաժեշտությունից ելնելով՝ հիմք է դնում հայ-վրացագիտության, հատկապես հայոց և վրաց լեզուների ընդհանրությունների լուսաբանման գործին:

Այդ ընդհանրությունները, որ առաջ են եկած, ինքնըստինքյան, տեղական հողի վրա, մի մասը, հատկապես, անցել-խաչավորվել է ինչպես նախորդ (այլևս գոյություն չունեցող, մեռած), այնպես էլ հարևան (կենդանի) լեզվախմբերից ու պահպանվել հայոց ու վրաց լեզուներում. այդ ընդհանրությունների մի մասն էլ իրարից է անցել-խաչավորվել՝ կազմելով, այսպես ասած, հարեթա-քարթա-հայկական ընդհանուր լեզվատարբերը:

Ահա այս կարգի ընդհանրություններն են, որ գալով երկու տարբեր լեզվախմբերի ապրած սկզբնական բնական ներթափանցումներից ու խաչավորումներից, այս կամ այն չափով և այս կամ այն կապակցությամբ, լուսաբանել է ն. Մառը:

Հայերենը, որպես խառը տիպի լեզուների, հատկապես արիո-եվրոպահարեթական լեզուների մի համախումբ, կիսով չափ իր բնույթով, ինչպես ն. Մառն է ասում, սերտ ազդեցության մեջ է կովկասյան ժողովուրդների լեզուների հետ,¹ մասնավորապես քարթվելական լեզուների (այն է՝ վրացերենի, ճաներենի, մեգրելերենի և սվաներենի) հետ:

Եվ ճիշտ որ, ուրիշ ոչ մի լեզու, հարևան լեզուներից ուրիշ ոչ մեկը (թեկուզ հնդեվրոպական լեզուներից և ոչ մեկը) հայերենի հետ այնքան ընդհանրություններ չունի, որքան քարթվելական լեզուները, հատկապես վրացերենը:

Այս է պատճառը, որ ն. Մառը հայոց և վրաց լեզուները անվանել է ազգակից լեզուներ: Նա այս թեզը տարբեր ձևակերպումներով և տարբեր կապակցությամբ արտահայտել է ու հիմնավորել բազմաթիվ տեղերում՝ սկսած իր սկզբնական գործերից ու նամակներից մինչև վերջին շրջանի գործերը:

Նենև 1893 թվին Գալուստ Միաբանին (Տ.-Մկրտչյանին) գրած նրա նամակներից մեկում² կարդում ենք՝ «...Մատնանիշ եմ անում այն հանգամանքին վրա, որ հայոց և վրաց լեզուները մի ժամանակ աղդակից են եղել...—և ապա շարունակում է նա.—հայոց և վրաց վաղեմի ազգակցությունը մեծ հարց է, որով ևս առանձին եմ մտադիր զբաղվիլ» (էջ 53, ըստ նրա գրած նամակների հաջորդականության):

¹ Н. Я. Марр. Кавказоведение и абхазский язык, Петроград, 1916, էջ 16.

² Ե. Մառի այս նամակը՝ № 18 (Գալուստ Տ.-Մկրտչյանին գրած նամակներից է), որ պահվում է Մատենադարանի արխիվային թղթերի մեջ, անթվակիր է, ենթադրաբար նրա գրության տարեթիվը հետազայում նշանակված է՝ 1893:

Այս նույն միտքը 1903 թվին Ն. Մառը արտահայտել է նաև իր գրաբարի քերականության առաջաբանում, որտեղ ուղղակի ասված է. «...Ինչ համար պարզ եղավ, որ հայոց լեզուն իր հատկության մի քանի էական կողմերով ազգակից է վրացերենին»¹ Մի այլ տեղ² նկատում է նա. «...Պետք է դիտել դասական հայերենում [≡ գրաբարում] այն բազմաթիվ վերապրուկները նախա-արիական հայերենի, որոնք սերտ ազգակցության մեջ էին վրացերենի հետ»։ Այնուհետև շարունակում է նա (նույն տեղում). «...Սա չեմ խոսում արդեն այն մասին, թե ըստ էության որքան անհրաժեշտ է հայոց լեզվի և հատկապես հայոց բարբառների համեմատական ուսումնասիրությունը վրացերենի հետ»³։ Եվ ընդհակառակը՝ «Վրաց լեզվի վրա կենտրոնացումը,—գրում է նա մի այլ տեղում,⁴—բոլորովին էլ չի բացառում կովկասյան մյուս լեզուների, առաջին հերթին՝ հայոց և թուրքական ազգային լեզուների ազգակցական առանձնահատկությունները՝ վրաց կենդանի խոսքի կառուցվածքը լուսարանելիս... Միայն հոլովման մեջ չէ, որ դրսևորվում է ժամանակակից կովկասյան հասարակության դեռևս երեք զուխավոր լեզուների այդ փաստական ազգակցությունը։ Այդ ազգակցությունը կարելի է գիտել ոչ միայն տիպաբանական, այլև նյութի տեսակետից էլ։ Վրացերենը կենցաղային նշանակության հսկայական ընդհանուր բառեր ունի հայերենի և նույնիսկ թուրքերենի հետ...»։ Վրաց լեզվի և նրա ամենամոտ ազգակից լեզուների ուսումնասիրության ժամանակ,—շարունակում է նա մի այլ տեղում⁵,—պետք է ընդունել, այսպես ասած, նրանց ազգակցական կապերի դրսևորումը նաև կովկասյան այլ լեզուների հետ, առաջին հերթին արխագերենի և ընդհանրապես հյուսիսային-կովկասյան լեզուների հետ՝ մի կողմից և մյուս կողմից՝ հայերենի հետ»։

Հայոց և վրաց լեզուները այն աստիճանի մոտ են իրար ու ազգակից, որ Ն. Մառը իր վերջին շրջանի գործերից մեկում ուղղակի ասում է՝ «Հայաստանում և Վրաստանում, յուրաքանչյուր երկրում հանդես եկավ երկուական լեզու, երկուսն էլ դասակարգային, մեկը հին գրական-ֆեոդալական և մյուսը, այսպես ասած, ժողովրդական... Վրաց ֆեոդալական լեզուն ըստ սիստեմի ավելի մոտ է կանգնած հայոց ֆեոդալական լեզվին, քան նրանցից յուրաքանչյուրը իր հարազատ երկրի ժողովրդական լեզվին, և այս հարաբերությամբ դեպի իրենց ֆեոդալական լեզուները, ինչպես հասկանալի է, հայոց և վրաց ժողովրդական լեզուները հանդիսանում են մի սիստեմի լեզուներ իրենց տիպաբանական հիմնական շատ զոներով»⁶։

Այսպիսով, ուրեմն, բազմաթիվ ընդհանրություններով սերտ ազգակցության մեջ են հայոց և վրաց լեզուները։

Նախքան այդ ընդհանրությունները բերելը պետք է պարզել, թե ինչպես պետք է հասկանալ հայոց և վրաց լեզուների ազգակցությունը և ինչ ուղիով կարող է ստացված լինել այն։

¹ Н. Марр. Грамматика древне-армянского языка, С.-Петербург. 1903, էջ XXXI.

² Н. Марр. Тексты и разыскания по армяно-грузинской филологии. С.-Петербург, 1903, էջ 13.

³ Նույն տեղում, էջ 22.

⁴ Н. Марр. К изучению современного грузинского языка, Петроград, 1922, էջ 4.

⁵ Н. Марр. К Бакинской дискуссии о яфетидологии и марксизме. Баку, 1932, էջ 13.

⁶ Նույն տեղում, էջ 18—19.

Այդ ազգակցությունը արդյո՞ք ստացված պետք է լինի մի ընդհանուր լեզվի բաժանման հետևանքով, ինչպես, սովորաբար, հասկանում են ոմանք, թե՛ բազմաթիվ նախորդ լեզուների իրար մոտեցման, ներթափանցման ու խաչավորման ուղիով:

Դժվար չի ենթադրել, որ հնագույն շրջաններում, զանազան պայմանների հետևանքով, մի որևէ լեզու կարող էր բաժանվել մասերի և իրարից հեռանալ: Այսպիսով նրանք (մի լեզվի այդ բաժանված մասերը), դարերի ընթացքում, ձեռք բերելով որոշ յուրահատկություններ՝ ի վերջո կարող էին հանդես գալ որպես առանձին լեզուներ: Բայց շնորհիվ իրենց մեջ պահպանած, այսպես ասած, սկզբնական ընդհանրությունների՝ նրանք, այս կամ այն չափով, կարող էին միաժամանակ ազգակից լինել իրար:

Լեզուների այս կարգի ազգակցությունները հնարավոր են միայն այն չափով, որչափով այդ բաժանումը կարող էր տեղի ունենալ: Իսկ դա համեմատաբար հազվադեպ երևույթ է լեզուների պատմության մեջ, քանի որ մենք, ինչպես հայտնի է, պատմականորեն լեզուների շատությունից գալիս ենք դեպի լեզուների քչությունը: Այս իսկ տեսակետից՝ կարող ենք ասել, որ լեզուները, վերջին հաշվով, ոչ թե աճել են, որ կարող էր միայն նրանց (=լեզուների) բաժանումից ստացվել, այլ, ընդհակառակը, քչացել են (և ի վերջո հասնելու հնք մի լեզվի): Իսկ այս անցումը, այն է՝ լեզուների շատությունից դեպի լեզուների քչությունը կատարվել է, անշուշտ, սկզբնական բազմաթիվ լեզուների բնական ներթափանցումների, միավորումների ու խաչավորումների հետևանքով: Սրանք, իրենց հերթին, առաջ են բերել, բնականաբար, տարբեր լեզուների ընդհանրություններ և, այսպես ասած, ազգակցություններ:

Լեզուների պատմությունից գիտենք, որ այս կամ այն լեզուն կարող է չքանալ, կամ վերափոխվել մի այլ լեզվի, կամ էլ ոչնչանալ այդ լեզվով խոսող լեզվական կոլեկտիվի ֆիզիկական ոչնչացման հետ միասին: Այս հնարավորությունը պարզ է, որ մեզ տանում է դեպի լեզուների թվի պակասեցումը: Եթե լեզուների բաժանումը կապված է, բնականաբար, լեզուների աճի հետ, ապա լեզվախաչավորումը, ընդհակառակը, կապվում է լեզուների նվազեցման հետ: Լեզվաբաժանման և լեզվախաչավորման պրոցեսները իրար չեն կտրուդ բացառել, նրանք գործում են իրար կողքի: Սակայն որոշ ժամանակաշրջանում կարող է լեզվաբաժանման պրոցեսն ավելի ուժեղ արտահայտվել, որոշ ժամանակաշրջանում էլ լեզվախաչավորումների պրոցեսը: 19-րդ և 20-րդ դարերում ժողովուրդների տնտեսական և կուլտուրական հարաբերությունների ոչ սովորական զարգացումը՝ հաղորդակցության տեխնիկայի անօրինակ առաջընթացի հետ կապված, ուժեղացնում է լեզվախաչավորման միտումները, թեև այժմ էլ մի շարք քաղաքական պայմանների շնորհիվ կատարվում է նոր լեզուների բյուրեղացում (ծաղկում) կամ մի լեզվի մի այլ լեզվով փոխարինում: Այսպես, օրինակ՝ վերջին մի դարի ընթացքում բավականաչափ փոքրիկ ազգություններ իրենց լեզուներով մաքրվեցին աշխարհի երեսից՝ Ամերիկայում էլ, Նվրոպայում էլ, նախկին Ռուսաստանի տիրապետության մեջ էլ և այլն: Իսկ Հոկտեմբերյան ռեոլուցիան Սովետական Միության մեջ ոչնչացման ճանապարհին կանգնած բազմաթիվ մանր ազգություններին վերադարձրեց իրենց ապրելու իրավունքը, ստեղծեց նրանց համար գրական լեզուներ, որոնցով ոչ միայն

աղատեց նրանց ոչնչացումից, այլև ստեղծեց նրանց համար զարգացման ու բարգավաճման լայն հեռանկարներ: Այժմ Սովետական Միության մեջ գոյություն ունեն մի քանի տասնյակ գրական լեզուներ:

Այսպիսով, ուրեմն, այժմ լեզուների ինքնորոշման միտումն ավելի ուժեղ է, քան միավորման (կամ խաչավորման): Բայց չնայած դրան՝ լեզուների թիվն այնուամենայնիվ չի ավելանում (չեղածից եղածը չի ստեղծվում):

Լեզուների թիվը չէր կարող ավելանալ մանավանդ այն ժամանակ, երբ նրանց ինքնորոշման համար նպաստավոր պայմաններ չկային:

Կարող ենք ընդունել նույնիսկ, որ մի կողմից՝ օրինակ՝ ժողովրդական լատիներենը մի լեզու է եղել, նրա բաժանումից թեկուզ և, ինչպես կարծում են ոմանք, ստացվել է հինգ լեզու՝ իտալերեն, իսպաներեն, պորտուգալերեն, ֆրանսերեն և ռումիներեն: Մյուս կողմից էլ, միաժամանակ, օրինակ՝ ֆրանսերենը կուլ է տվել պրովանսերենը, իսպաներենը՝ կատալոներենը, գերմաներենը կամ իտալերենը՝ ռեառո-ռոմաներենը և այլն և այլն: Սրա հետ միասին՝ չէ՞ որ մի ժամանակ գոյություն են ունեցել մի շարք լեզուներ, որոնք այժմ մեռած են, ինչպես, օրինակ՝ Իտալիայի հին լեզուն — էտրուսկերենը, Փոքր-Ասիայի հին լեզուներ — խալդերենը, խեթերենը, միտանի լեզուն... և այլն: Ձեռք խոսում արդեն գիր ու գրականություն չունեցող այն բազմաթիվ լեզուների մասին, որոնք կորել են անհետ:

Այսպիսով, ուրեմն, ընդհանրապես լեզուների միավորման (կամ խաչավորման) միտումը, վերջին հաշվով, միշտ էլ ավելի ուժեղ է եղել, քան բաժանման, որով և նրանց թիվը ոչ թե ավելացել է, այլ պակասել: Հետեւվարար և՛ բնօրինակ լեզվատարերը մեծ մասամբ առաջ պետք է գտնվեն ոչ թե լեզուների բաժանման օւղիով, այլ, բնականաբար, լեզուների իրար մոտեցման, խաչավորման և միավորման օւղիով:

Այս ուղիով, ահա, ստացված պետք է լինեն նաև հայոց և վրաց լեզուների ընդհանրությունները. ընդհանրություններ, որ դրսևորվում են ինչպես բազմաթիվ բառերով ու բառարմատներով, այնպես էլ մի քանի տասնյակ մասնիկներով:

Սրանք հայոց և վրաց լեզուների ընդհանրություններ են, որոնք զալիս են, մեծ մասամբ, հնագույն շրջաններից: այսպես ասած, նախա-արիական (հաբեթական) լեզուներից:

Լեզվական մի կոլեկտիվ բնավ էլ մեկուսացած չէր կարող լինել մյուսից: Ոչ միայն այժմ, երբ աշխարհի տարրեր անկյունները տնտեսական և կուլտուրական տնտեսության սերտ կերպով կապված են իրար հետ, այլև հնում էլ դժվար է պատկերացնել այնպիսի լեզվական կոլեկտիվ, որ կարողանար բոլորովին մեկուսացած ապրել: Քաղաքական և կուլտուր-տնտեսական կապերը մանավանդ զարգացման հավասար աստիճանի վրա գտնվող լեզվական կոլեկտիվների միջև միշտ էլ անխուսափելի են: Նախ և առաջ՝ այդ կապերը դրսևորվում են լեզվական կոլեկտիվների միջև բառերի անցումներով ու յուրացումներով, որոնք կարող են լինել, եթե կարելի է ասել, անմիջական և միջնորդական (ուրիշ լեզվի միջոցով յուրացված):

Աշխարհի երեսին չկա մի լեզու, որ, այս կամ այն չափով, ուրիշ լեզուներից բառեր չունենա յուրացրած: Ոչ էլ մասնիկների անցումներն են անկարելի, թեև դրա համար անհրաժեշտ են լեզուների ավելի մոտ հա-

րարերություններն ու շփումները, նույնիսկ լեզվախաչավորումները՝ Մա-
ֆուր լեզու, լեզու միտքի ձևը՝ պաշարով, օրիշ լեզուների պաշարից անկախ,
զոյություն մեծի: Հետևապես և՛ ընդհանուր այս կամ այն լեզվատարրը,
մանավանդ երբ դա հնագույն շրջանից է գալիս, դժվար է մեկ կամ մյուս
լեզվի սեփականությունը համարել:

Քաջավորված այս կամ այն լեզվատարրը լեզուն յուրացնում է և այն-
քան յուրահատուկ է դարձնում իրեն, որ ժամանակի ընթացքում այլևս
դժվար է լինում ասել, թե դա որտեղից է գալիս: Օրինակ՝ գրական հայե-
րենով խոսողն անշուշտ չի ասի «զոբոդ», այլ «ֆադաֆ» կասի, խորապես
համոզված լինելով, որ հայերեն բառ է գործածում: Այսօրվա հասկացողու-
թյամբ՝ ճիշտ որ այդպես է. բայց որ քննենք, թե որտեղից է գալիս «ֆադաֆ»
բառը, կարգավի, որ բնավ էլ հայերեն չէ (ֆադաֆ բառը ասուրական է
համարվում, բայց թե այդ բառը ասուրերենի սեփականություն է եղել,
դարձյալ դժվար է ասել):

Այսպիսով, ուրեմն, այն տեսակետը, որի համաձայն այս կամ այն
լեզվի բառապաշարը բաժանվում է բնիկ և փոխառյալ բառերի, հիմքում
ունի ինչ-որ «նախամայր» լեզու, նրա հետագա բաժանումներն ու ճյու-
ղավորումները: Այս ուղիով ստացված լեզվական ազգակցությունները, ինչ-
պես արդեն նշեցինք, պատմականորեն բնորոշ չեն լեզուների շարժման
ընթացքին (այն է՝ նրանց շատությունից դեպի քշությունը բերող
ընթացքին):

Ըստ այդ տեսակետի՝ դուրս է գալիս, որ ընդհանրապես լեզուներն
ունեն իրենց, այսպես ասած, «սեփական» (= բնիկ) բառերը, որ նրանք
«մաքուր» են ու «սկզբնական» և մյուս լեզուներից սահմանագծված ու
կտրված. որ նրանք այդ իրենց «սեփական» բառերից մյուսներին կարող
են տալ միայն փոխարինաբար և այլն:

Այս կամ այն բառը այս կամ այն լեզվին վերագրելը և նրա «սեփա-
կանությունը» համարելը շատ պայմանական է: Ինչպես հայտնի է, վա-
ղագույն շրջաններում լեզվական ավելի փոքր կոլեկտիվների ժամանակ
լեզվախաչավորումների և նրանց զարգացման հավասար աստիճանին կա-
տարված լեզվական ներթափանցումների հետևանքով, այսպես ասած,
խաչավորված այս կամ այն լեզվատարրը կարող է պահպանված լինել, որ-
պես ընդհանրություն, երկու կամ ավելի լեզուներում՝ ձևա-իմաստային
որոշ յուրահատուկ երանգավորումներով (ըստ այդ լեզուների հնչյունական
որոշ օրինաչափության): Այսպիսի լեզվատարրեր, անշուշտ, երկու կամ
ավելի լեզուների ընդհանրություններն են և ոչ թե այս կամ այն լեզվի
սեփականությունն ու մյուս լեզուների փոխառություններն են:

Հայերենը վրացերենի հետ, որպես նրան ազգակից լեզու, բազմաթիվ
ընդհանրություններ ունի: Քանի որ հնդեվրոպաբանների տեսակետից
հայոց և վրաց լեզուները տարբեր «ընտանիքների» պատկանող լեզուներ
են, ուստի այդ ընդհանրությունները նրանց ուսումնասիրությունների մեջ
բացատրված են լուրջ փոխառությունների միջոցով: Այս պատճառով էլ
հաճախ, օրինակ, միևնույն բառերը տարբեր հնդեվրոպաբան գիտնական-
ների մոտ տարբեր լեզուներին են վերագրվում: Այսպես օրինակ՝ ակադ.
Հր. Աճառյանի տեսակետով հայերենից են անցել վրացերենին, օրինակ,

¹ Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. 1, 1940, Երևան:

կալ, ցեխ-ցեխի, լորձն, խոց-խոցի և այլն, մինչդեռ այս նույն բառերը, ընդհանրապես, վրացերենից է անցած հասարում հայերենին նորվեգիացի արևելագեա-լեզվաբան H. Vogt-ը:¹

Այսպիսի հակասություններ միշտ էլ սպասելի են ու կլինեն, անշուշտ, եթե մենք աշխատենք հայոց և վրաց լեզուների ընդհանրությունները մի լեզվից մյուսին անցումների կամ փոխառությունների միջոցով բացատրել, եթե մենք անտեսենք հայոց և վրաց լեզուների այն ազգակցությունը, որ ստեղծվել է նրանց միջև վաղագույն շրջաններում, նրանց ձևավորման պրոցեսում՝ նախորդ բազմաթիվ լեզուների իրար մոտեցման, ներթափանցումների, խաչավորումների ու միավորումների միջոցով:

Այդ ընդհանրությունների մի մասը մեզ հաջողվում է նույնիսկ ստուգաբանել, այս կամ այն չափով, մեկ կամ մյուս լեզվով. տվյալ լեզուն, ինչպես երևում է, դեռ այսօր էլ, առավել կամ նվազ չափով, համեմատաբար ավելի թարմ պահպանել է այդ ընդհանրությունների հնագույն վերապրուկները, նախորդ այն լեզվի վերապրուկները, որից խաչավորվել է տվյալ բառը և ընդհանուր է իր մյուս ազգակից լեզվի հետ: Այսպիսի դեպքերում, ուրեմն, այս կամ այն բառը ստուգաբանող լեզուն չենք կարող նույնիսկ այդ բառերի փոխատու լեզուն համարել...

Այսպիսի ընդհանրություններից մենք կարող ենք վերցնել, օրինակ, գալառ || գվառ բառերը. հայերենում՝ գալառ բառը՝ երկրորդական իմաստով է պահպանված՝ «տեղի || վայրի || երկրամասի» նշանակությամբ, իսկ վրացերենում (քարթվելական լեզուներում)՝ սկզբնական իմաստով, այն է՝ «ցեղ, ազգ, տեսակ, տոհմ, տուն, ընտանիք» նշանակությամբ: Այսպես, օրինակ՝ վրց. ջղահ-ո (գվառ-ի) նշանակում է «ազգ (|| ցեղ, տոհմ) || ազգանուն». սրա հնչյունափոխությունից՝ ճղահ-ո (գառ-ի) վա>ա փոխանցումով, օրինակ, թուշերեն գոռ-ի «ազգ, տեսակ, ցեղ, տոհմ, տուն, ընտանիք»), որից՝ վրց. հա-ճղահ || հո-ճղահ (բա-գոռ>ոռ-գոռ «ինչ-ցեղ>ինչ-ըղ, ինչ տեսակ || ինչպես»)... և այլն: Պարզ է, որ վրացերեն նշանակությունները սկզբնական են (որ ցույց են տալիս էթնիկական անուններ՝ «ազգ, ցեղ, տոհմ...»), իսկ հայերեն նշանակությունները՝ երկրորդական. «էթնոսի» անունից «տեղի» (=գալառի || երկրամասի) անվան անցում է կատարված (որ սովորաբար լինում է լեզվի մեջ, ինչպես, օրինակ՝ հայ-ֆ նախ նշանակել է «հայեր», որպես էթնոս և ապա՝ «Հայաստան», այն է՝ նրանց բնակվելու տեղը. Վիր-ֆ—նախ՝ «վիրեր || վրացիներ» և ապա՝ Վրաստան—նրանց բնակվելու տեղը... և այլն):

Սա դեռևս չի նշանակում, թե այդ («գալառ») բառը վրացերենից է անցել հայերենին: Դա փաստորեն ընդհանուր բառերից է, հավանաբար մի ընդհանուր աղբյուրից եկող (խաչավորված):

Հյ. եր-կառ (|| եր-կա || եր-կի) թվական անվան ձևա-իմաստային համարժեքն է, իմ կարծիքով, քարթվելական ճղ-ձր || ճղ-ձը (եր-էը || եր-էե): Սա իր կազմությամբ կրկնական է, երկու համարժեք բաղադրյալ մասերից կազմված՝

¹ Hans Vogt. Armentien et caucasique du Sud. 1938. (այս օրինակները բերում եմ իլիա Արուստի «Վրաց և հայոց գրական կապերը IX—X դարերում» գրքից (Քրեիտի, 1944, վրաց. լեզվով):

² Հ. Աճառյան («Արմ. բառ.») հյ. գալառ բառը համարում է կովկ. փոխառություն:

br+fb>br+fr: Առաջինը՝ ճան.-մեղրելիքներում պահպանված *յր (եր <յերու=վրց. որ-ի երկուս) բառն է, որին միացած է սվաներենում պահպանված իո>իո (fb>fn երկուս) բառը՝ որից՝ սվան. յր+յց-թա>յր+յց-թա (եր+fb-դա>եր+fr-դա երկուս, երկուս միասին), որը, ինչպես տեսնում ենք, բաղադրյալ կրկնակի բառ է (-դա մասնիկով)... բառահիմքը՝ brfb (|| երթու) > brfr է, որ նույն է, անշուշտ, հյ. երկու բառի հետ: Բայց սա դարձյալ չի նշանակում, թե մեր երկու բառը քարթվելական (կամ կովկասյան) լեզուներից է անցել հայերենին:

Հյ. եզ (|| եզ-ակի) «մեկ» բառի արմատն է զ||զա, որ պահպանված է կովկասյան մի շարք լեզուներում, ինչպես, օրինակ՝ արխաղերեն սե—զե «մեկ» (կամ՝ բժա—սա տասն-մեկ), ուրիխերեն զա «մեկ» (կամ՝ զիւ—զա տասնմեկ), ադիգերեն զեբ || զի «մեկ» (կամ՝ հշեկու—զե տասնմեկ), կարարդերեն սե || զե «մեկ» (կամ՝ հշեկու-զ տասնմեկ), ծախուրերեն սա «մեկ», թաբասարաներեն սա-ր || սա-բ «մեկ», ռութուրերեն սա || սա-դ «մեկ», ջեկերեն սա-դ || սա-բ «մեկ», ռուտուխերեն սա-դ «մեկ» և այլն: Բայց դա չի նշանակում, թե հյ. եզ բառը կովկասյան լեզուներից է փախառյալ, ինչպես համարում է Հ. Աճառյանը («Արմ. բառ.», ալ ընդհանուր բառերից է:

Հյ. խոփ բառի ձևա-իմաստային համարժեքն է վրց. եռոյ-ո (խոփ-ի), որ կարելի է ստուգաբանել քարթվելական լեզուներով. խոփ- || դ'ոփ- (—վրց. ~~յռոց-ո~~ դ'ոփ-ա «բաժանել», որից Յ-յռոց-ո մ-դ ոփ-ի «բաժանող, անջատող, կտրող»... և այլն): Հայերենում «խոփ» նշանակում է 1. արորի կամ մաճի երկաթ, 2. երկաթե ցից» («Առձեռն»-ից), վրացերենում՝ եռոյ-ո (խոփ-ի «նավի թիակը» ըստ Ս.Օրբելիանու վրացերեն բառարանի) || յռոց-ո (դ'ոփ-ի || մ-դ'ոփ-ի «բաժանող, անջատող, կտրող», որից՝ սա-դ'ոփ-ի «բաժանող փայտ»... և այլն):

Դարձյալ դժվար է ասել, թե հայերենն այդ բառը փոխ է առել վրացերենից. սա ևս սովորական ընդհանուր բառերից է երկու լեզվում էլ:

Հյ. ծաբ-աւ բառի արմատն է, անշուշտ, ծաբ-(-աւ մասնիկով, ինչպես, օրինակ՝ մի շարք տեղանունները՝ Թեղ-աւ, Կճ-աւ, Որդն-աւ. այլև՝ սակ-աւ, հարկ-աւ, անձկ-աւ... քարթվելական տիկ-տկ→տկ-աւ || տղ-աւ «մորթի»... և այլն), որից՝ ծաբ-աւ-ուտ ջրի կարոտ, անջուր (տեղ)՝ նշանակությամբ, ծաբ-աւ-ի «ծարաւ, ծարուած, ծարուող, ջուր չունեցող»... նշանակությամբ և այլն՝ բոլորն էլ կապված ջրի գաղափարի հետ (ջուր չունեցող, ջրի կարոտ): Այս նույն ծաբ-ջուր բառարմատը պահպանված է քարթվելական լեզուներում, ինչպես, օրինակ՝ ճան. Ծար-(ծկար-) || Ծար-(ծաբ-ջուր) Աթինի բարբառում), որից վրց. Ծար-լոցնա (ծաբ-դունա «ջրհեղեղ»), մեգր. Ծար-(ծղ'ար-ջուր), որից վրց. Ծար-ո (ծղ'ար-ո «աղբյուր, ջուր»),

¹ Այս բե-եր երկուս՝ բառը հյուսիսային-կովկասյան լեզուներում պահպանված է ուղղակի կու ձևով (խինալուդերեն), կուե (դուբուշերենում) կամ դ'ուե (արճերենում)... և այլն: Այս կու ձևի մյուս փոփոխակն է՝ կի, որից քեր. սեռի նշաններով՝ կի-ու-ա, կի-բ-ա, կի-բ-ա «երկուս» (դումուքերենում), կամ կի-գ-ո «երկուս» (դունձերենում, անժուխերենում և ճաներենում): Այստեղից՝ կիւր «երկուս» և կիմ «հետ» բառերի միացումից՝ կիւր-կիմ>կր-կիմ «երկուս հետ» ձևով պահպանված է նաև հայերենում (իսկ կր-կիմ<բկ-կիմ <«երկ-կիմ ձեռք հանելը, իմ կարծիքով, ճիշտ չէ»:

² Հ. Աճառյանը («Արմ. բառ.», հյ. խոփ բառը համարում է կովկ. փոխառություն:

վրց. ֆյալ- (ծղ'ալ-ջուր)...) և այլն. Ուրեմն՝ ծաբ- բառարմատը, որ ընդհանուր է, պահպանված է քարթվելական լեզուներում (ծղ'ալ- || ծղ'աբ- || ծկար- ||)ծար- ջուր» և հյ. ծար-աւ ջրով, ջրի կարոտ» բառակերպ մեջ (ինչպես այդ հենց վրացերենում էլ է, օրինակ՝ ծղ' - ջուր» բառարմատից՝ ծղ' - ուր բառով, բառը, օրինակ՝ վրց. մ-ծռ' - ուր-իա բառով եմք... և այլն)։

Ո՞րը որից է անցել, դարձյալ դժվար է ասել. սա ես ընդհանուր է երկու լեզվի համար։

Ընդհանուր բառերից են նաև հյ. ծիր բոլորտիք, շրջան» և վրց. ֆր-ց (ծր-ե կլոր շրջագծած, շրջան), որից և վրց. ֆր-ց (ծեր-ա շրջագծել, թուրադրել, դրել)...) և այլն¹։

Հյ. ծիրան-ի բառը, որ նշանակում է գեղեցիկ կարմիր խառն դեղինի հետ, ծիրան պտղի նման, վարդագույն, ոսկեգույն, մանուշակագույն, ծովագույն, երկնագույն» [(ըստ Առձեռն-ի), որից և՛ ծիրան-ածաղիկ կարմիր ծաղիկներով, ծիրան-ածայր բայերը կարմիր կամ ոսկեգույն», ծիրան-ական ծիրանի, գեղեցիկ կարմիր, ծիրան-աներկյալ ծիրանագույն ներկած, կարմրած], նույն է, ինչ որ սփաներեն (Լենտիխի բարբ.)՝ ցըրան-ո (ծըրան-ի կարմիր) || ֆըրն-ո (ծըրն-ի կարմիր) || ճա-ֆրան-ո (նա-ծըրան-ի կարմրություն) և վրց. ֆրոյց-ո (ծիրել-ի կարմիր)։

Այստեղ էլ դժվար է ասել, թե որոնցից է անցած, քանի որ սրանք սովորական ընդհանրություններ են։

Հյ. կիմ || կիմ-ք ոտին տակը, կռնակը և հետքը՝ (ըստ Առձեռն-ի), որից՝ ևռ-ևհմ ? (< *ևհռ-ևհմ երկու հետ» || կր-կն-ե || կր-կն-ական), գ-կն-ի հետևից» || կն-ի (օրինակ՝ «կնի-երթալ» արտահայտության մեջ), հույն է մեզը. յոն-ո (կիմ-ի գին, հետ), յոն-ոն (կիմ-ոն «այնու-եհտ-և, հետ-ո»)...) և այլն։ Այստեղ արմատը, ըստ երևույթի, կի է (մասնիկը՝ -ն), որը վրացերենում պահպանված է *կու ձևով (այլ մասնիկով), ինչպես, օրինակ՝ ց-ցը (ա-կու «ետ», օրինակ՝ վրց. ուկու ազգը «ետ շարտեց»), ց-ցը-ան (ու-կու-ան «հետև»), ց-ալ-ո (կու-ալ-ի «հետ») > ց-ալ-ո (կու-ալ-ի «կր-կիմ || երկու հետ, դարձյալ»), ց-ալ-ո (կու-ալ-ա «հետագոտել»), ց-ց-ը (ու-կու-ե «հետևապես, արդեն»)...) և այլն²։

Կող- բառարմատից կազմված է վրց. յոլ-ց (կող-վա), որ նշանակում է «կտրել» (իսկ կախեթի շրջանում՝ նաև «քարի մակերեսը կտրել, տաշել»), որից՝ մ-յոլ-ց-ո (մ-կող-ավ-ի «կտրիչ, կտրող»), Նա-յոլ-ց (սա-կող-ի «կտրելիք»), յոլ-ց-ալ (կող-ալա) || եյ-յոլ-ց (խե-կող-ա «փայտատ» թռչունը), ինչպես նաև՝ յոլ-ց (կող-ի «կտր» = չափի տեսակը), որ, օրինակ՝ կախեթի շրջանում, նշանակում է նախ՝ «միջուկը կտրած, հանած՝ գերանի մեծ աման, տակառի պես, որի մեջ կամ հացահատիկ են պահում, կամ էլ հովիվները նրա մեջ պանիր են պահապատում» և ապա նույն գերանից միջուկը հանած մեղրի փեթակ», այստեղից՝ յոլ-ց-ն ֆոնթել (կողի ծիծեռի փեթակի վրա, որն ունի միջուկը հանած գերանի մեծ աման, որի մեջ հավաքվում է ջուրը և հավաքվածը դուրս գալով՝ պտտեցնում է ջրադալի ա-

¹ Հ. Առաքյալ (Արմ. բառ.) հյ. ծիր բառը համարում է կովկ. փոխառություն։

² Հ. Առաքյալ (Արմ. բառ.) հյ. կիմ-ի բառը համարում է կովկ. փոխառություն և համեմատում է միայն վրց. կու-ալ, ուկու-ալ և նման ձևերի հետ։

Տեղեկագիր 7—8, 5

նիվը»), յորդոն Գյալոն (կադ-իս ծղ'ալի) || յորդ-օ (կադ-ա աղբյուր, որի մոտ գրված է միջուկը հանած գերանի մեծ աման, որի մեջ հավաքվում է աղբյուրի ջուրը), ալև՝ յորդ-ո (կադ-ի «կոտ», չափի մի տեսակը, որը ենոր լիտրով տասը լիտր է անույն ըստ Ս. Օրբելիանու վրացերեն բառարանի), յորդ-ոյ-ո (կադ-իկ-ի «կոտի» չափի փոքր տեսակը, ըստ Ս. Օրբելիանու բառարանի)... և այլն: Այսպիսով, ուրեմն, վրց. կադ- բառարմատը կապված է ընդհանրապես «կտրելու» դործողության հետ և նշանակում է կամ «կտրել» (գործողություն) և կամ «կտրած բան» (օրինակ՝ «միջուկը կտրած՝ հանած գերան»): Սա, անշուշտ, նույն է հյ. կոտ- բառարմատի հետ (դ || տ հարաբերությունում), որից, օրինակ, կոտ-որ-ակ, կոտ-որ || կոտ-որ-ել > կոտ-ր-ել > կտ-ր-ել > կրտ-ել («ր»-ի դրափոխությունը, որ սովորաբար լինում է հայերենում. հմմտ. կծ-ել = *կծ-ր-ել > կրծ-ել. կճ-ել || կճ-ր-ել > կրճ-ել. ճղ-ել || ճղ-ր-ել > ճղղ-ել՝ «լարաբ. բարբ. և այլն»): Այստեղ ընդհանուր կադ- || կոտ- բառարմատին հայերենում միաձուլված է -որ || -ր բառամասնիկը (հմմտ. հատ→հատոր, բեկ→բեկ-որ, բնդ-ել→բնդ-որ-ել... և այլն): Բայց թե որը որից է անցած, դարձյալ զեկվար է ստել:

Ընդհանուր բառարմատներից է նաև ձեղ- || ձել-. սկզբնականը՝ ձել- է, որ պահպանված է վրացերենում ժցլ-ո (ձել-ի) «կտրած փայտ, գերան» նշանակությամբ: Սա սկզբնական նշանակություն է, անշուշտ (այն է՝ «ծառ, փայտ, գերան»), որից կատարվել է իմաստային անցում, այսինքն՝ «ծառ, փայտ, գերան» սկզբնական գաղափարից (-ուն երբեմնի հավաքական մասնիկով) անցել է մի այնպիսի բառագաղափարի, որ նրա հավաքականությունն է ցույց տալիս մի տեղում. այսպես, օրինակ՝ ձել- || ձեղ-... *ձեղ-ք || ձեղ-ուն «առիք, առաստաղ, տանիք» (որ պատրաստվել է նախապես «փայտից, գերաններից», նրանց հավաքականությունից)՝ նախապես պետք է նշանակեր «կտրած ծառեր, գերաններ», որպես հավաքական, և ապա՝ այն տեղը, որտեղ այդ հավաքականությունը գործ է ածվել (իմաստային նման անցումները շատ սովորական են մասնավոր տեղանունների մեջ, ինչպես, օրինակ՝ Տանձի-ք—նախ «տանձեր» և ապա՝ տանձիների հավաքականությունը պարունակող տեղը՝ տեղանունը. Այր-ք || Այր-եր—նախ «քարայրներ» և ապա՝ քարայրներով տեղ. Հայ-ք—նախ «հայեր» և ապա՝ հայերով բնակված տեղ (= Հայաստան). Որդն-ալ—նախ «որդունք» || որդեր» և ապա՝ որդերով տեղ (= որդն-ուտ)... և այլն):

Վրց. ձել- «կտրած գերան, ծառ» բառի տարրերակը ճան.-մեզրելերենում ջա- || ջալ- է՝ «ծառ» նշանակությամբ, որից հայերենում ունենք՝ ջալ-ոտ «գավազան, փայտ» առումով (-ուտ մասնիկով, ինչպես, օրինակ՝ ճան. լազ || լակ-շունք բառից հյ. լակ-ուտ շան ձագը և այլն):

Հյ. շուեր- || շվեր- «անհայտ նշանակություն ունեցող և առանձին անգործածական բառ» է համարվում (ըստ «Արմատական բառարան»-ի), որից՝ վատա-շուեր (|| վատա-շվոր || վատա-շուեր-ի) || յարա-շուեր բառաձևերը: Այս շուեր բառարմատը, իմ կարծիքով, նույն է քարթվելական Պյոգ- || Պյոգ- (շուեր- || շուեն- «գեղ») բառարմատի հետ, որով գործ է ածվում Պ-Պյոգ- (ու-շուեր-ի «տեղ»)։ սրա մյուս փոփոխակը «շուեն» բառարմատից՝ Պյոգ-ոցո (շուեն-իների «գեղեցիկ») և այլն: Վրց. ու-շուեր-ի «ա-գեղ» բառի իմաստը պետք է արտահայտեն, իմ կարծիքով, նաև հյ. վատա-շուեր || յարա-շուեր բառերը:

Հյ. սուր-ալ «վազել, գնալ» բառի արմատն է սուր-, որի փոփոխակն է, անշուշտ, սուլ-, որից՝ վրց. եղլ-ա (սուլ-ա) || Գ-եղլ-ա (ծա-սուլ-ա «գնալ»), Գ-եղլ-ո (ծա-սուլ-ի «գնացած»), Զ-եղլ-ո (ժի-սուլ-ի «գնացած, հասած») և այլն և այլն:

Այսպիսի շատ և շատ օրինակներ կարող ենք բերել. բայց այսքանն էլ բավական է՝ համոզվելու, որ հայոց և վրաց լեզուների բազմաթիվ ընդհանրությունների մեջ երբեմն հաջողվում է մեկ կամ մյուս լեզվով այս կամ այն բառը ստուգաբանել, բայց դա զեռնա չի նշանակում, որ ավյալ բառը, անշուշտ, ստուգաբանվող լեզվից է փոխառյալ: Այդպիսի բառեր նույնքան հարազատ են ստուգաբանվող լեզվի համար, որքան մյուս, նրան ազգակից, լեզվի համար, սակայն այն տարբերությամբ, որ առաջինը այդ ընդհանրությունների ավելի հին վերապրուկներն է պահպանել իր մեջ: Այլ կերպ ասած՝ սրանք այնպիսի ընդհանրություններ են, որոնք գալիս են գեղես, ինչպես Ն. Մառն է ասում, նախա-արիական (հաբեթական) լեզուներից: Այսպես կոչված՝ հաբեթական հիշյալ լեզուներն են, անշուշտ, հայոց և վրաց լեզուների այդ ընդհանուր բառերի հիմնական աղբյուրը, մի աղբյուր, որ գոյացել է նախորդ բազմաթիվ լեզուներից և այսօր այլևս չկա, բայց դա զեռ այսօր էլ լեզուների երբեմնի բնական ներթափանցումների և խաչավորումների հետևանքով՝ վերապրում է, այս կամ այն չափով, հայոց և վրաց լեզուներում:

Այսպիսով, ուրեմն, այդ աղբյուրը ոչ զուտ հայկական է և ոչ էլ զուտ վրացական, այլ ընդհանուր է երկուսի համար էլ:

Մյուս կողմից էլ՝ փաստերը հաճախ խոսում են այն տեսակետի՝ զեռ, որի համաձայն հայոց և վրաց լեզուների ընդհանուր բառերի մի մասը, որ, այս կամ այն չափով, կապվում է «հնդեվրոպական» արմատների հետ, համարվում է հայերենից փոխառյալ վրացերենի մեջ: Սովորաբար այսպես չէ, երբ մենք քննում ենք հայոց և վրաց լեզուների ընդհանրությունները: Այսպես չէ, օրինակ, քարթվելական լեզուներում ընդհանրապես, ճեղքերավոր կենդանիներ՝ այծ, ուլ, ոչխար, դառն... և այլն՝ նշանակող բառաձևերում գրանցված ընդհանուր տիկ || տկ- (>թիկ- || ցիկ-) բառարմատը. հաներենում Ծոյ-սծ-ո (տիկ-ան-ի) նշանակում է «այծիկ» = վրց. տոյ-սծ-ո (թիկ-ան-ի || ցիկ-ան-ի «այծիկ, ուլ», այլև՝ քուր-ցիկ-ի «այծեամն», վա-ցիկ-ի > վա-ցի «որձ այծ»), ապա Ծո-Ծոյ-սծ-ո (րա-տկ-ան-ի «ոչխարիկ, դառ») կամ Ծո-Ծոյ-ո (բա-տկ-ի՝ վրացերենում—«մատղաշ այծիկ, ուլիկ» ըստ Ս. Օրբելիանու վրացերեն բառսրանի, իսկ զբերքերում՝ «աշնանը ծնած ընտանի կենդանու ձագ») կա նաև՝ մեգր. Ծո-Ծոյ-ս (բա-տիկ-ա < *բա-տիկ-ան-ի > բա-տի-ա- «մի տարեկան էգ այծ»)... և այլն:

Այս նույն բառարմատը տարածված է նաև հյուսիսային-կովկասյան լեզուներում: Այսպես, օրինակ՝ չերքեզերենում տեկի-եխա «արու ոչխար կամ այծ» է նշանակում, որի առաջին մասը տեկի «այծ կամ ոչխար» է ընդհանրապես (իսկ երկրորդ մասը՝ ոխա || խու «արու» է նշանակում): այս տեկր բառը տիկ ձևով պահպանված է չաչներեն—քիստերեն—ծովերենի ատ-տիգ «հայր» բառաձևի մեջ, որը նախապես յա-տեկ-ի || յա-տիկ-ի՝ «էգ կենդանի», իսկ վա-տիկ-ի՝ «արու կենդանի» ձևով է հղել և այլն:

Թե հարավային-կովկասյան (քարթվելական) և թե հյուսիսային-կովկասյան լեզուների մեջ հիշյալ բոլոր բառաձևերը, ինչպես տեսնում ենք,

ընդհանրապես կենդանու (այծի, ուլի, ոչխարի, գառան... և այլն) գաղափարն են արտահայտում. արմատը՝ տիկ (|| տեկ) || տիգ (|| տեգ) || տկ- (|| թիկ- || ցիկ-) է. որը, ըստ երևույթին՝ նույն է հյ. տիկ- || տկ-(վերջինս, օրինակ՝ տկ-6օր՝ ձևի մեջ) բառարմատի հետ: Այս նույն տիկ- || տիգ- || ցիկ- բառարմատը տարածված է նաև «հնդեվրոպական» կոչված որոշ լեզուներում, ինչպես, օրինակ՝ digā, zīgā, «այծ», zickl «ուլ», zige, ziege «այծ», ticcen «այծիկ, ուլ»... և այլն (տես՝ «Արմատական բառարան»՝ տիկ բառի տակ):

Հյ. տիկ- || տկ- բառարմատն ևս, ինչպես կովկասյան լեզուների համարժեքներից է երևում, սկզբում պետք է նույն ընդհանուր նշանակությունն ունենար, ինչ որ կովկասյան լեզուների հիշյալ բառաձևերը, արտահայտելով նախ՝ ընդհանրապես կենդանու (այծի, ուլի, ոչխարի, գառան...) գաղափարը և ապա՝ կենդանուց հանած մորթու իմաստը,¹ որ դեռ այսօր էլ, իմ կարծիքով, պահպանված է հայոց որոշ դարձվածքներում: Օրինակ՝ երբ ասում ենք՝ «տկերով կարագ ու պանիրը» կամ՝ «եղն ու մեղրը շան տլի մեջ» առածը, պարզ է որ տիկ բառն այստեղ միայն այծի մորթուց շինած աման չի հասկացվում (այլ ընդհանրապես կենդանու մորթուց շինած աման):

Այս տեսակետից էլ, ինչպես «տիկ» բառը հայերենում ընդհանրապես կենդանու մօրթի է նշանակում, այնպես էլ նրա համարժեքները վրացերենում (և ընդհանրապես քարթվելական, ինչպես նաև՝ հյուսիսային-կովկասյան լեզուներում) հենց ուղղակի կենդանի են նշանակում: Սկզբնականն, անշուշտ, մի բառաձևիցույց տված իմաստի ընդհանուր առումն է (= տարբեր առումները). այսպես, օրինակ՝ «տիկ» բառը արտահայտել է ոչ միայն «այծի», այլ ընդհանրապես կենդանու (այծի, ուլի, ոչխարի, գառան...) գաղափարը: Իմաստի այդ բազմազանության հետ միասին քարթվելական (ինչպես նաև՝ ընդհանրապես կովկասյան) լեզուները պահպանել են նաև այդ նույն բառազգափարի սկզբնական, այն է՝ հենց ուղղակի կենդանու (այծի, ուլի, ոչխարի, գառան...) իմաստային ընդհանուր առումները: Հայերենը, սակայն, հետագա առումներն են անշուշտ, ընդ որում՝ ընդհանրապես սկզբնական—կենդանու գաղափարից կատարվել է երկրորդական—կենդանու մորթու իմաստային անցումը:

Այս տիկ- || տկ- բառարմատը, անշուշտ, տեղական ծագում ունի, որ, որպես ընդհանուր բառարմատներից, պահպանված է քարթվելական (և ընդհանրապես կովկասյան) լեզուներում. և հայոց նախա-արիական լեզվաշերտում (նախապես հյ. տիկ-ն = քարթվել. տիկ-ան ձևով, հայերենում՝ -ա<-ան մասնիկի իսպառ անկումով):

¹ -6օր մասնիկով ուրիշ ձևեր էլ ունենք հայերենում, ինչպես, օրինակ՝ աճա-ել «սաղանով տրորել լվացքը» և աճա-լար-ել՝ «նույնը՝ իմաստի սաստկացումով»: Սա, ըստ իմ, բարդ մասնիկ է՝ -ն+որ <-ին+որ մասնիկների բաղադրումից կաղված, որի հակառակ դրսևորումն էլ կա, այսպես՝ *առ+հն > *ա+հն > ահն. օր.՝ տակ «արմատ» բառից՝ տակ-նին «արմտից», «խաղը» բառից՝ խաղը-նին «խաղը, խաղառակություն»... և այլն:

² Ինչպես, օր.՝ առաւ, КОЗА «այծ, պարկապուկ» և КОЖА «մորթի». հայերեն՝ տիկ- > տկ- «կենդանի», որից՝ տկ-եթ-ի > տեթի «մորթի»... և այլն | աղ. աւ-ի՝ -աւ մասնիկով՝ հմմտ. վրց. կվալ- «հետք || կիճ» բառից՝ կվլ-աւ «կրկին», վրց. ողեմ «չափ» բառից ողե-աւ «սակավ»... և այլն |

Այս ընդհանուր տիկ- || տկ-(|| թիկ- || ցիկ-)» բառարմատին բարդված են նաև բառաստեղծական տարբեր մասնիկները (մանավանդ քարթվելական լեզուներում). այսպես, օրինակ՝ հյ. տիկ, տկ-նոր և քարթվել. տիկ-տն-ի (|| թիկ-ան-ի || ցիկ-տն-ի) || վա-ցիկ-ի || բա-տիկ-ա || բա-տկ-ի || բա-տկ-ան-ի... և այլն: Հյ. տիկ || տկ-նոր բառաձևի մեջ մասնիկը -նոր է (հմմտ., օրինակ՝ աճո-ել տորորել» բայից՝ աճո-նոր-ել... ձևի հետ):

Քարթվելական տիկ-տն-ի (|| թիկ-ան-ի || ցիկ-ան-ի) || վա-ցիկ-ի || բա-տիկ-ի || բա-տիկ-ա < բա-տիկ-տն-ի և այլ ձևերի մեջ երկու կարգի մասնիկներ կան—նախամասնիկները՝ վա- և բա-, որոնք երբեմնի քերականական սեռի կամ դասի ցուցանիշներն են (ինչպես պարզում է ալագեմիկոս Բ. Ջավախիշվիլին)¹ և վերջամասնիկը՝ -ան, որ տեղական ընդհանուր մասնիկներից է հայոց և վրաց լեզուներում: Վրացերենում -ան >-ա (սովորաբար «նա-ի ան-կումով) և հայերենում՝ -ամ >-րն || -ն փոխանցումով պահպանված (օրինակ՝ տիկ || *տիկ-ն < *տիկ-ան), որ երբեմնի ընդհանուր բառաստեղծական մասնիկներից է՝ միաձուլված տիկ-(|| թիկ- || ցիկ-) || տկ- բառարմատներին: Սրանց անջատումը հնարավոր է միայն նախ վրացերեն տվյալ բառաձևերն իրար համեմատելով [այսպես, օրինակ՝ տիկ-ան-ի (|| թիկ-ան-ի || ցիկ-ան-ի || վա-ցիկ-ի) || բա-տիկ-ա || բա-տիկ-ի || բա-տկ-ան-ի...] և ապա՝ համեմատության ղեկավարելով հյ. համարժեքների (տիկ || տկ-նոր» բառերի) հետ:

Այս բոլորից հետո արդյոք իրավունք ունենք ասելու, որ տիկ բառը հայերենից է անցել վրացերենին, ինչպես կարելի էր մտածել տիկ բառի ինչ-որ «հնդեվրոպական» ծագումից ելնելով. իհարկե, ոչ: Սա, անշուշտ, ընդհանուր բառերից է հայոց և վրաց լեզուներում (կովկասյան լեզուներում այդ բառը պահպանել է իր սկզբնական նշանակությունը):

Այս կարգի հարցադրությամբ և խնդրի լուծումով, իմ կարծիքով, ի վիճակի կլինենք է՛լ ավելի ճիշտ կերպով ըմբռնելու հայոց և վրաց լեզուների ընդհանուր բառերի, իրոք, այն ազգակցությունը, որ առաջ է քաշել Ն. Մառը և աշխատել է ապացուցել իր բազմաթիվ աշխատությունների մեջ:

Այսպիսով, ուրեմն, զարգացման միևնույն աստիճանի վրա գտնվող, այսպես ասած, լեզվական կոլեկտիվների ամենասկզբնական փոխհարաբերությունների, շփումների, ներթափանցումների և յուրացումների կամ լեզվալսաչափությունների հետևանքով առաջ եկած լեզվական ընդհանրությունները կարող են լինել «արմատական» (բառերն առանց մասնիկների կամ ածանցների) և «բաղադրյալ» (բառարմատներն իրենց ածանցներով հանդերձ). վերջիններիս հետ բաղադրված ածանցներն էլ ներթափանցած կլինեն, անշուշտ, իրենց բառարմատների հետ մեկտեղ: Իայց սա չէ, իհարկե, ածանցի անցումը մի լեզվից մյուսին: Այսօր մենք ասում ենք՝ կապիտալ—կապիտալիստ, կոմունա—կոմունիստ, իդեալ—իդեալիստ... և այլն: Այսպիսի օրինակներում ածանցների անցումների մասին խոսք չի կարող լինել: Ելնելով իստ

¹ Տես՝ աղագ. Ի. Ջավախիշվիլի. Քարթվելական և կովկասյան լեզուների ամենակարգավորված ընդհանուր ազգակցությունը, 1937, Թբիլիսի (վրաց լեզվով), որտեղ նա պարզում է, որ քարթվելական լեզուների տարբեր բառաձևերում պահպանված չա- նախամասնիկը երբեմնի անշափահասությամբ կամ կենդանու զազափաբ է արտահայտել: Սրա հակառակ՝ վա- նախամասնիկը (ինչպես, օրինակ՝ վա-ցիկի բառը այժմ ձևի մեջ) արական սեռի զազափաբ է զրուհիների մի ժամանակ նաև քարթվելական լեզուներում:

ածանցը պարունակող բառերն են փոխառյալ, և ոչ թե ածանցը: Ածանցի անցման մասին կարող ենք խոսել միայն այն ժամանակ, երբ, օրինակ, մի լեզվի ածանցը մյուս լեզվի բառաձևերի մեջ բառաստեղծակույն դերով է համընկնում: Մրա օրինակը կարող է ծառայել հայերենում -իստ մասնիկով՝ «թառ-իստ», «փող-իստ»... և այլն, եթե վերջինս, իհարկե, գործածական լիներ...

Հայերենում այսօր էլ, այս կամ այն չափով, նոր բառեր են մուտք գործում, բայց ածանցները զրեթե երբեք, նոր բառեր են անցել հայերենին առաջներում էլ, թե զրավոր և թե նախազրավոր շրջաններում: Կատարվել են նաև ածանցների անցումները, բայց համեմատաբար շատ հազվադեպ դեպքերում: Ածանցների անցումներն ու յուրացումները պայմանավորված են հիմնականում լեզվական կոլեկտիվների ամենամոտ շփումներով՝ ներթափանցումներով և խաչավորումներով: Այսպիսով, ուրեմն, լեզվական կոլեկտիվների ամենամոտ հարաբերությունների, շփումների, ներթափանցումների և խաչավորումների (կամ խառնման) հետևանքով ներթափանցած ածանցները նախապես ընդհանուր են լինում տվյալ լեզուներում, հետագայում արդեն ենթարկվում են ձևա-իմաստային յուրահատուկ երանգավորումներին՝ ըստ խաչավորված լեզուների հնչյունական օրինաչափության: Այսպես են ահա հայոց և վրաց լեզուների բաղմաթիվ ընդհանուր ածանցները (կամ մասնիկները), որոնք հայոց և վրաց լեզուներում խաչավորված են հնագույն շրջաններում նախա-արիական (հաբեթական) լեզուներից:

Այդ կարելի է տեսնել:

Կովկասյան լեզուների հնագույն երևույթներից մեկը պետք է համարել այն, որ նրանք ղեռ այսօր էլ սովորաբար իրենց բայաձևերում զրսևորում են անուններից անցած բաղմաթիվ ձևաբանական կարգերը (կամ սուբեկտի և օբեկտի վոխհարաբերությունը): Այսպես, օրինակ՝ կովկասյան լեզուների բայաձևերում, ինչպես սկզբում էլ ցույց տվեցի, զրսևորված են ոչ միայն սուբեկտի ղեմքի նշանները, որ սովորաբար մյուս լեզուներում էլ կան, այլև ընդհանրապես օբեկտի (ուղղակի և անուղղակի օբեկտի) ղեմքի նշանները: Իհարկե, այս երևույթը հայերենի բայաձևերում չի արտահայտված, որով և հայերենը հիմնականում տարբերվում է կովկասյան լեզուներից, բայց ինչ վերաբերում է ուրիշ մի շարք լեզվական զրսևորումներին, ինչպես, օրինակ՝ անուններից բայերին անցած զանազան մասնիկների զրսևորումներին, հայերենը սերտ ազդակցության մեջ է տեղական լեզուների, առաջին հերթին՝ քարթվելական լեզուների հետ:

Սա, անշուշտ, լեզվական հնագույն երևույթներից է, որ պահպանված է այսօր էլ հայոց և վրաց լեզուներում:

Երկու լեզվի ընդհանուր մասնիկների համեմատությունից պարզվում է, որ նրանց հիմնական իմաստը նախապես կապված է եղել, մեծ մասամբ, անունների հավաքական կամ հոգնակի զաղափարի հետ: Հետագայում այդ մասնիկները ստացել են իմաստային տարբեր երանգավորումներ, որոնց հետ միասին նաև ձևական որոշ փոփոխություններ են կրել նրանք ըստ տարբեր լեզուների հնչյունական օրինաչափության:

Այս պրոցեսում է ահա, որ անունների հոգնակի մասնիկները երկու լեզվում էլ, ինչպես պարզվում է, անուններից անցել են բայերին՝ վերջիններիս ձևավորման պրոցեսում՝ նրանց տալով իմաստի տարբեր երանգներ:

Անուններից ծագող այդ հոգնակի մասնիկները բայաձևերի մեջ էլ նախ և առաջ կապվում են անմիջականորեն օրեկտի և սուբեկտի, որպես առարկաների (=անունների), հոգնակիության հետ, այնուհետև բայի ցույց տված գործողության կրկնության կամ բազմապատկության հետ (որ ցույց է տրված մեծ մասամբ մի օրեկտի կամ միանման օրեկտների շատ մասերում), ապա՝ գործողության տեսականության կամ ինտենսիվության հետ... և այլն: [Այս երևույթը մասամբ գիտել եմ արդեն այլ կապակցությամբ (մեր Ակադ. «Տեղեկ.» № 6—7, 1944)]:

Այսպես, օրինակ՝ հարեթական մասնիկները մի համախումբը, որ խաչավորված ու պահպանված է հայոց ու վրաց լեզուներում, հետևյալն է՝ հյ. -տտ, -տտ, -տ և վրց. -տ (տ), -տ (տ), -տ (-դ): Հայերենում -ատ, -տտ, -տ մասնիկները՝ հասցես են գալիս նաև վերջից -ի մասնիկի բաղադրումով, այսպես՝ -ատ || -ատ + ի, -տտ || -տտ + ի, -տ || -տ + ի: Սրանք մի ժամանակ հայերենում, ինչպես հայտնի է, արտահայտել են և դեռ այսօր էլ (որոշ բարբառներում) արտահայտում են հոգնակի կամ հավաքական գաղափարը, ինչպես, օրինակ՝ «մանուկ» բառի հոգնակին եղել է թե մանկուց + ք և թե մանկ-տի «մանուկներ», «ծակ» բառից՝ թե ծակ + ք և թե ծակ-տի «ծակեր», «ոսկր» բառից՝ թե ոսկեր-ք և թե ոսկո-տտի «ոսկորներ», «փոր» բառից՝ թե փոր-ք և թե փոր-տտի «աղիքներ»... -ատի մասնիկով հոգնակի ձևեր պահպանված են մեծ մասամբ Ադուլիսի բարբառում, օրինակ՝ պըռվ-տտի + ք «պառաջներ», դըղըր-ատի + ք «զազարներ», կըղթ-ըր + ատի + ք «կողթեր»... և այլն:

Այս հոգնակի մասնիկները անուններից անցել են բայերին՝ վերջիններիս ձևավորման ժամանակ՝ -ատի -տտ, -տտի -տտ, -տի—-տ ձևով և իրենց հոգնակի գաղափարը բայաձևերի մեջ դրսևորել են տարբեր երանգներով: Այսպես, օրինակ՝ «ծակ» նշանակում է «մի ծակ», «ծակ-տի»՝ «շատ ծակեր», որից և՛ «ծակ-տ-ել» բայաձևը «շատ ծակեր բանալ» նշանակությամբ. պատահա՛ «մի պատահ», պատահ-տտի՝ «շատ պատահներ» և այստեղից էլ պատահ-տ-ել՝ «շատ պատահոցներ անել» կամ, ինչպես ասում են, «պատահ-պատահ անել»: փշուր՝ «մի փշուր», փշր-ատի՝ «շատ փշուրներ», որից և՛ փշր-տտ-ել՝ «շատ փշուրներ անել» կամ, ինչպես ասում են, «փշուր-փշուր անել»: կտոր՝ «մի կտոր», կտոր-ատի՝ «շատ կտորներ», այստեղից էլ կտոր-ատ-ել՝ «շատ կտորներ անել», կամ, ինչպես ասում են, «կտոր-կտոր անել»... Այս ձևով նաև՝ հնձ-ել = օր.՝ մի արտ հնձել, բայց՝ հնձ-տտ-ել = բոլոր արտերը հնձել: վառ-ել = օր.՝ մի կրակ վառել, բայց՝ վառ-տտ-ել = բոլոր կրակները վառել: մորթ-ել = օր.՝ մի ոչխոր մորթել, բայց՝ մորթ-տտ-ել = բոլոր ոչխարները մորթել: նստ-ել = օր.՝ մեկը նստել, բայց՝ նստ-տտ-ել = բոլորը նստել: սատկ-ել = օր.՝ մի ձի սատկել, բայց՝ սատկ-տտ-ել = բոլոր ձիերը սատկել... և այլն:

Այսպես կարող ենք մենք շատ ու շատ օրինակներ բերել. սա իմ առանձին ուսումնասիրության նյութն է՝ «Հայերենի բայաձևանցները» վերնագրով, որտեղ ես աշխատում եմ ապացուցել, որ ընդհանրապես անուն-

¹ Այս և այստեղ շոշափված մյուս մասնիկները՝ մանրագին քննության արժանի են: Բարկած առանձին մեծածավալ ուսումնասիրության մեջ՝ «Հայոց և վրաց լեզուների ձևա-իմաստային ընդհանրությունները» վերնագրով (25 մամուլ ծավալով), որ դեռ անտիպ է:

ների մասնիկները, հատկապես հոգնակի մասնիկները, անուններից անցնելով բայերին, վերջիններիս ձևավորման պրոցեսում՝ սովորաբար ցույց են տալիս նրանց մեջ «շատի» գաղափարը։ Իմ այստեղ բերած օրինակներից էլ դժվար չէ ըմբռնել, որ -ատ, -ուտ, -տ ածանցները՝ գալով անունների համապատասխան եռզմակի մասնիկներից՝ բայաձևերի մեջ էլ շարունակում են արտահայտել նույն «շատի» գաղափարը — այս դեպքում արդեն, այսպես ասած, գործողության «շատի» գաղափարը, որ դրսևորվում է հաճախ գործողելիյան կրկնության մեջ ու տեսականությամբ։

Իմաստի այս վերջին առումով հանդես են գալիս քարթվելական լեզուների բայաձևերում հյ. -ուտ, -տ մասնիկների ձևա-իմաստային համարժեքները՝ ուդ և -դ մասնիկները, որոնք սովորաբար բայաձևերի մեջ ցույց են տալիս գործողության տեսականությունը (ինչպես նաև կրկնությունը)։ Այսպես, օրինակ՝ վրց. մո-լո-ս (մի-դի-ս գնում է) բայից՝ ուդ մասնիկով՝ մո-լո-ու-դ (մի-դի-ու-դ) բայաձևը նշանակում է «գնում էր» (ինչպես նաև՝ «ամեն անգամ գնում էր»)։ Այստեղ գործողությունը սկսված է ու շարունակվում է (և հետևապես՝ տևական է), իսկ անցյալ կատարյալում, որտեղ գործողությունը վերջացած է, -ուդ մասնիկը հանդես չի գալիս)։ Այսպես նաև՝ վրց. ֆրց-ո (ծվեր-ա պահում է) բայից՝ ֆրց-ու-ո (ծվեր-ու-ա պահում էր), կամ «ամեն անգամ պահում էր»), ֆրց-ո (քրեր-ա հանգչում է) բայից՝ ֆրց-ու-ո (քրեր-ու-ա հանգչում էր) և ամեն անգամ հանգչում էր), ֆոտլ-ո (ծիթլեր-ա կարմրում է) բայից՝ ֆոտլ-ու-ո (ծիթլեր-ու-ա կարմրում էր) և ամեն անգամ կարմրում էր), կամ էլ՝ նֆց-ո (սծեր-ա գրում է) բայից՝ նֆց-ու-ո (սծեր-ու-ա գրում էր) և ամեն անգամ գրում էր), տլ-ո (թլի-ա տալում է) բայից՝ տլ-ու-ո (թլի-ու-ա տալում էր) և ամեն անգամ տալում էր), լղլ-ո (ղլավ-ա հուզվում է) բայից՝ լղլ-ու-ո (ղլավ-ու-ա հուզվում էր) և ամեն անգամ հուզվում էր)։... և այլն։

-Ատ, -ուտ, -տ մասնիկների նման ընդհանուր են նաև -ամ (|| -ամ+ի || -ե+ամ>-են) և -ն մասնիկները։ Սրանք ևս երկու լեզվի ընդհանուր երբեմնի հոգնակի կամ հավաքական մասնիկներից են։ Այսպես, օրինակ՝ հյ. ձի-ամ=վրց. ցխեն-ն-ի «ձիեր», հյ. իշ-ամ (|| իշ-ե+ամ)=վրց. վիր-ն-ի «էշեր» (ինչպես, օրինակ՝ գլխ-եամ «գլուխներ», խոզ-եամ «խոզեր»...), հյ. իծ-ամ=վրց. թխա-ն-ի «այծեր»... հյ. ավադ-ամ+ի=վրց. խուց-ն-ի «մեծեր», հյ. կրակ-ամ+ի=վրց. ցեցխլ-ն-ի «կրակներ», հյ. առած-ամ+ի — վրց. իգավ-ն-ի «առածներ»... և այլն։ Այս նույն հոգնակի մասնիկներն էլ անուններից անցել են բայերին՝ իմաստի տարբեր երանգավորումներով։ Այսպես, օրինակ՝ վրց. ռալց-ո (դաղվար-ա) նշանակում է «մի բան թափեց», բայց՝ ռալց-ո-ն (դաղվար-ն ա)՝ «շատ-բան թափեց» (=թափոնե-եց, օր.՝ լրց-ո-ն ռալց-ո-ն-ն ցրեմլ-ն-ի դաղվար-ն-ա=«արցունքներ թափեց»)։ Զալ-ո (զաճր-ա)՝ «մի բան կտրեց», բայց՝ Զալ-ո-ն (զաճր-ն-ա)՝ «շատ բան կտրեց»։ Զալ-ո-ն (զալ-ա)՝ «մի բան փռեց», բայց՝ Զալ-ո-ն (զալ-ն-ա)՝ «շատ բան փռեց»... և այլն։

Այստեղ՝ հին վրացերենի բայաձևերում, ինչպես տեսնում ենք, հանդես է գալիս անունների ընդհանուր հոգնակի -ն մասնիկը՝ նույն «շատի» գաղափարով։ Այդ նույն մասնիկը -ամ (|| -ն) ձևով հանդես է գալիս նաև հայերենի բայաձևերում՝ «շատի» գաղափարից գործողության տեսականու-

թյան կաս՝ մի վիճակից մյուսին անցնելու դադափարը դրսևորելով՝ Այս-
պես, օրինակ՝ ձի→ձի-ան→ձի-ան-ալ (ձիուց ձի դառնալու վիճակը ցույց
տալով)։ էշ→իշ-ան→իշ-ան-ալ (— էշ դառնալ)։ այսպես նաև՝ քար→քար-
ան-ալ, մեծ→մեծ-ան-ալ, լի→լի-ան-ալ... աղքատ→աղքատ-անլ→աղքատ-
ան-ալ... և այլն։¹

Հետաքրքրական է, որ գրաբարում միևնույն բայերի զուգահեռ
ձևեր էլ կան, մեկը՝ սովորական, իսկ մյուսը՝ ավելի տևական գործողու-
թյուն ցույց տալու համար, ինչպես, օրինակ՝ ցանկ-ամ || ցանկ-ան-ամ,
անձկ-ամ || անձկ—ան-ամ, տենչ-ամ || տենչ-ան-ամ... դատ-եմ || դատ-ան-եմ,
դիդ-եմ || գիդ-ան-եմ, ստեղծ-եմ || ստեղծ-ան-եմ... և այլն։ Այդ տևակա-
նության գաղափարը հիմնականում մթագնած է։ Այսպես է ահա գլխավո-
րապես գրաբարից աշխարհագրորին անցած բայաձևերի մեջ, որտեղ այսօր
այդ ածանցի ձևական փոփոխությունն էլ է կատարված, ինչպես, օրինակ՝
հաս-ան-ել→հաս-ն-ել, տես-ան-ել→տես-ն-ել, դտ-ան-ել→գտ-ն-ել (կամ
բոլորովին դուրս է ընկած՝ հատ-ան-ել→հատ-ել, խած-ան-ել→խածել)...
և այլն։ Այս -ան || -ն ածանցը հանդես է գալիս բայի այնպիսի ձևերում
(օրինակ՝ ներկայում, անցյալ անկատարում և այլն), որտեղ գործողու-
թյունը կատարված չէ (սկսված, բայց վերջացած չէ, այսինքն՝ տևում է),
իսկ կատարյալում նա դուրս է ընկնում, ինչպես օրինակ՝ տես-ան-եմ,
տես-ան-էի, բայց՝ տես-այ, հաս-ան-եմ, հաս-ան-էի, բայց՝ հաս-այ...
և այլն։

Այս -ան || -ն || -ն մասնիկները հանդես են գալիս նաև որոշ բայաձև-
վերի վերջից՝ հոգնակի գաղափար արտահայտելու համար. այսպես, օրի-
նակ՝ վրց. տլո-ն (թլի-ս) նշանակում է «աաչում է», իսկ տլո-ան (թլի-ան)
«տաչում եմ»։ վրց. ցրո-ն (դրի-ս)՝ «թափում է», իսկ ցրո-ան (դրի-ան)
«թափում եմ»։ Ֆլո-ն (չլի-ս)՝ «փռում է», իսկ Ֆլո-ան (չլի-ան) «փռում
եմ»... անոց-ն (անթեր-ս)՝ «վառում է», իսկ անոց-ան (անթեր-ան)՝ «վա-
ռում եմ»։ օրոնոց-ն (փրինավ-ս)՝ «թռչում է», իսկ օրոնոց-ան (փրինավ-ան)
«թռչում եմ»։ ծանոթ-ն (բանաոր-ս)՝ «լողանում է», իսկ ծանոթ-ան (բանաոր-
ան)՝ «լողանում եմ»... և այլն։

Անուններից բայերին են անցել նաև ընդհանուր -որ || -ար || -ր... հոգ-
նակի մասնիկները. -որ հոգնակի մասնիկը անունների մեջ առանձին հան-
դես չի գալիս, այլ սովորաբար բարդվում է այլ մասնիկներին։ Օրինակ՝
«արտ» բառի հոգնակին (կամ հավաքականը) մի ժամանակ «արտ-որ+այ»
էր. այսպես նաև՝ վան-որ+այ «վանքեր», դաշտ-որ+այ «դաշտեր», կալ-
որ+այ «կալեր»... Սրանց վերջից կարող է նորից -հ հոգնակի մասնիկն ա-
վելանալ, ինչպես, օրինակ՝ արտ-որ+այ+հ «արտեր», վան-որ+այ+հ
«վանքեր»... և այլն։

Այստեղ, օրինակ, արտ-որ+այ+հ «արտեր» բառաձևն իրար բարդված
երեք հոգնակի մասնիկ ունի, որոնցից առաջինը «որ»-ն է (որը անունների
մեջ, ինչպես արդեն ասացինք, սովորաբար առանձին չի գործածվում), իսկ
վերջին երկուսը՝ -այ+հ > -աի > -աի)՝ ձևով՝ գործածական է նաև

¹ -ան հոգնակի մասնիկի մասին բայաձևերում հանդես գալու մասին առաջինը
դիտել է ընկ. Ա. Ղարիբյանը (տես նրա՝ «Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության
ներածություն», 1937, Երևան, էջ 98)։

² Նրկրարբառ այ>ա (-այի+>-աի) սովորական (ժողովրդական) պարզացումով։

առանձին՝ հոգնակի բառաձևերում, ինչպես, օրինակ՝ կից || *կաց → կան-այք, տիկն → տիկն-այք, իշխոն → իշխան-այք, պարոն → պարոն-այք... ^{խակ} առանց -f մասնիկի, որ հավանաբար հետագա բարդման արդյունքն է, կռնենայինք՝ *կան-այ (< *կան-ան || կան-ան + ի) *տիկն-այ, *իշխան-այ... և այլն (ինչպես, օրինակ՝ վան-որ + այ, որից և հետագա -f մասնիկի բարդումով՝ վան-որ + այ + f)... ուրեմն, կարելի է ենթադրել, որ -օր մասնիկն էլ առանձին պետք է գործածվելիս լինե՞ր անունների մեջ (քանի որ մենք նրան հանդիպում ենք բայերի մեջ նաև առանձին գործածված)։

Այսպես, օրինակ՝ «կապ-ել» բայից ունենք՝ կապ-կապ-ել → կապ-կապ-ուտ-ել, բայց նաև՝ սրան գուգակից՝ կապ-կապ-օր-ել՝ «շատ կապկապել» նշանակությամբ. «ծակ-ել» բայից՝ ծակ-ծկ-ել → ծակ-ծկ-ուտ-ել, բայց նաև ծակ-ծկ-օր-ել՝ «շատ ծակծկել» նշանակությամբ. «խագ-ել» բայից՝ խագ-մգ-ել → խագ-մգ-օր-ել, բայց նաև՝ խագ-մգ-օր-ել՝ «շատ խագմգել» նշանակությամբ, ինչպես նաև՝ կարկատ-ել → կարկատ-ուտ-ել և կարկատ-օր-ել՝ «զանազան բաներ կարկատել», լաստ-ել → լաստ-ուտ-ել և լաստ-օր-ել՝ «շատ լուստներ՝ հնձած խոտից փոքրիկ-փոքրիկ դեղիկներ շինել»։ Բշտ-ել → բշտ-ուտ-ել և բշտ-օր-ել՝ «շատ բշտիկներ դուրս տալ»։ Լպստ-ել → լպստ-ուտ-ել և լպստ-օր-ել՝ «բոլորը լիզելով՝ ուտել վերջացնել»... և այլն¹։

Անունների հոգնակի մասնիկներից հայտնի է -եք մասնիկը, ինչպես, օրինակ՝ իշ-եքար «էշեր», բան-եքար «բաներ», խոսքեր, վան-եքար «վանքեր, վանականներ»... և այլն։ Այս մասնիկի ժողովրդական պարզացումից հնարավոր է ստանալ -եր || օր- || -իք ըստ աարբեր բարբառների. օրինակ՝ հին հայերեն բան-եքար հոգնակի ձևը մի բարբառում (ինչպես նաև՝ նոր դրական հայերենում) դրսևորվել է բան-եր ձևով. մի այլ բարբառում՝ բան-ար ձևով (ինչպես, օրինակ՝ Ագուլիսի բարբառում՝ հմմտ. տրն-ար «տներ», շոն-ար «շներ», հաց-ար «հացեր»...), մի երրորդ բարբառում էլ բան-իք ձևով։ Այս վերջին-ը հոգնակին է, որ սովորաբար անուններից, իմ կարծիքով, անցել է որոշ բայերին՝ -իք > -ք սովորական փոխանցումով. այսպես, օրինակ՝ «գունդ → գունտ» բառից՝ գնտ-ել և գնտ-ր-ել (< *գնտ-իք-ել ձևից = «շատ կլորացնել» նշանակությամբ). «գորով» բառից՝ գորով-ր-ել (< *գորով-իք-ել ձևից = «շատ սիրով ու գորովով համոզել»)։ «թարախ» բառից՝ թարխ-ր-ել (< *թարախ-իք-ել ձևից — «վերքին կամ պալարին շատ թարախ գոյանալը»)։ «ամպ» բառից՝ ամպ-ր-ել (< *ամպ-իք-ել ձևից) ... և այլն։ Այս -ր ածանցը բայաձևերի մեջ միանում է և ուրիշ ածանցներին, ինչպես նաև՝ -տ ածանցին, և սովորաբար փոխվում է -ո-ի, ինչպես, օրինակ՝ ճանկ-ել → ճանկ-ո-ւ-տ-ել, չոք-ել → չոք-ո-ւ-տ-ել՝ «շարունակ ծնրադրել», ջոկ-ել — ջոկ-ո-ւ-տ-ել՝ «բոլորն էլ իրարից ջոկել»... և այլն (ես այստեղ կանգ չեմ առնում այս մասնիկի բազմազան դրսևորումների վրա, որ մանրամասն քննությամբ ենթարկելի է Հայերենի բայածանցները առանձին ուսումնասիրության մեջ)։

¹ Մանավանդ որ քարթվելական լեզուներում (-ոա || -ոդ || -դ) > -ք (ինչպես այլն) փոխանցման դեպքերն էլ կան, ինչպես, օրինակ՝ վրաց. գաղմոկիդերս = գաղմոկիդերս «վար կրեիր», վրաց. գաղմոմխդարա = գաղմոմխդարա «վտր է իջել», վրաց. գաղմոուխամս = գաղմոուխամս «ածել է», վրաց. մուլադուր-ի = ճան. մալադուդ «թռչունի մի անսակը», վրաց. ցիվիր-ի = մեզր. — ճան. ցիվիր(ն)դ-ի «քիթ» և այլն. այս անսակետից էլ կասկած չկա, որ -ուտ || -օր մասնիկները եթե ոչ նույնը, գոնե իրար համազօր մասնիկներ են։

Այս ընդհանուր մասնակներէջ՝ -ար մասնիկը սվաներենի սովորական հոգնակի մասնակներէջ է, որով անունների եղակի ձևերից հոգնակի ձևեր են կազմվում: Սա էլ սվաներենում անուններից անցած պետք է լինի նաև բայերին. վերջիններս մեջ գա ցույց է տալիս սովորաբար օրեկտի հոգնակիությունը, գործողության հաճախակիությունն ու սաստկությունը. այսպես, օրինակ՝ սվան. բայերից Լոյց-ց (լիզ-հ) նշանակում է թողնել ըստ բան թողնել, իսկ Լոյց-բ-ր-ց (լիզ-հ-բ-հ < *լիզ-հ-ար-հ)՝ շատ բան թողնել, Լոծ-ծ (լիզ-ի) նշանակում է ուղարկել ըստ բան ուղարկել, իսկ Լոծ-բ-ր-ց (լիզ-բ-ր-հ < *լիզ-ար-հ)՝ շատ բան ուղարկել ըստ բան ուղարկել... և այլն:¹

Նման երևույթ կարող ենք տեսնել նաև կովկասյան մյուս լեզուներում: Օրինակ՝ արխազերեն լեզվի տապանքերեն բարբառի մարգկանց դասին պատկանող բառերի մեջ հիմնականում հանդես է գալիս q' (ա) հոգնակի մասնիկը (որը, իմ կարծիքով, նույն պետք է լինի հյ. -ց և վրց. -ք հոգնակի մասնիկների հետ), այսպես, օրինակ՝ օթօջ' (ածախւ աշակերտ) բառի հոգնակին է՝ օթօջ'-ց'ա (ածախւ-ց'ա աշակերտներ)։ Ժժրած (ածղար աղ-ջիկ) բառից՝ Ժժրած-ւ'ն (ածղար-ց'ա աղջիկներ)։ օձ'լա (աղ'լա հարևան) բառից՝ ց'ա (աղ'լա-ց ա հարևաններ)։... այնուհետև նույն հոգնակի մասնիկը մտնում է նաև բայերին՝ նույն շլատի՝ գաղափարով. այսպես, օրինակ՝ արխազ. շթա-նա-ծ (ուհալա-խատ) նշանակում է գող (տղա-մարդ) ծանրացար, իսկ -ց' (ա) հոգնակի մասնիկով՝ շթա-ց'ն-ծ (ուհալա-ց Խատ)՝ գող (տղամարդ) շատ ծանրացար. յս-ն (յաս-ն նշանակում է նա (տղամարդ) նեղացավ, իսկ յս-ց'ն-ն (յաս-ց'ա-ն)՝ նա (տղամարդ) շատ նեղացավ... այսպես նաև՝ արխազ. -ծա (-ծա = վրց. -դ = հյ. -տ) մասնիկով՝ Բա-ծա-ըոտ (Կա-ձա-դիշթ) = գող (տղամարդ) շատ քնեցիր... և այլն։

Այսպիսի օրինակներ կարելի է դարձյալ գտնել կովկասյան ուրիշ լեզուներից էլ, բայց այսօրանն էլ բավական է՝ տեսնելու այն ընդհանրու-թյունը, որ հայերենն ունի կովկասյան լեզուների հետ՝ հոգնակի մասնիկ-ների և անուններից նրանց անցումների ու բայաձևերում դրսևորումների տեսակետից:

Իսկ այդպիսի ընդհանուրություններ քիչ չեն, քիչ չեն այն ընդհանուր մասնիկները, որոնք անուններից անցել են բայերին՝ վերջիններս ձևավորման պրոցեսում։ Սա ցույց է տալիս այն սերտ կապը, որ նախապես եղել է անունների և բայերի, այն է՝ առարկաների և նրանց հետ կապված գործողությունների միջև և դեռ այսօր էլ պահպանված է հատկապես կոպկասյան լեզուների տարբեր բայաձևերում, որպես հնագույն լեզվական երևույթի վերապրուկներ։ Այդ վերապրուկներով ոչ պակաս չափով հարուստ է և՛ հայերենը...

Այստեղ կարելի էր մի մասնիկ ևս բերել. օրինակ՝ արխագերենում ոչ մարդկանց, այն է՝ նյութական աշխարհի հոգնակիներին է յիշ (թ'ա) մասնիկը,

¹ Այս սխալն. որդեակները բերում եմ Ն. Մամի K вопросу о положении абхазского языка среди яфетических, С. Петербург, 1912, էջ 15—16, որտեղ այս երեկույթը սխալներինում նկատել է Ն. Մամը:

, *საქართვებან იტინასწხილ რხილ ხმ თიასპჩის მქთახეზნს ვრდჱ*. (ქუთ ლომ-
თათიძე, აბზახური ენის ტაპანთური დიალექტი, თბილისი, 1944, გვ. 180 ს 74—76).

որը նույնը պիտք է լինի հյ. ք հոգնակի մասնիկի հետ. այսպես, օրինակ՝ արխազ. օ՛րլո(ա՛ծլաթառ) բառի հոգնակին է՝ օ՛րլո-յ՛(ա՛ծլա-ֆ՛աթառ-ֆ || ծառեր)։ օ՛րլ(աչը ձի) բառի հոգնակին՝ օրլ-յ՛(աչը-ֆ՛աթի-ֆ || ձիեր)։ օյ՛ժլ (ա՛կտու հազ) բառի հոգնակին՝ օյ՛ժլ-յ՛(ա՛կտու-ֆ՛ազ-ֆ || հազեր)։... և այլն։ Այս ընդհանուր-ֆ մասնիկը հայերենում անուններից անցել է նաև բայերին, ինչպես, օրինակ՝ ձայն բառից՝ ձայն-ֆ ձայներ, որից և ձայն-ֆ-ել. ընդ այլ→դէլ→դէլ-ֆ (<*ընդ այլ-ֆ ձևից)→դէլ-ֆ-ել. հարց→հարց-ան+ֆ հարցեր>հարց-ն+ֆ-ել (<*հարց-ան+ֆ-ել ձևից)։ ծեծ→ծեծ-ֆ ծեծեր>ծեծ-ֆ-ել, ինչպես նաև՝ ճղ-ել→ճղ-ֆ-ել (|| ճեղ-ֆ-ել ձևից)։... և այլն։ բոլորն էլ շատին զաղափարն արտահայտելով։

Այսպիսի անցում հայերենում կատարել են նաև ուրիշ շատ մասնիկներ, որ քննության եմ առել առանձին ձայներն ի բայածանցները ուսումնասիրության մեջ [զրանց ձևա-իմաստային համարժեքները, անշուշտ, կան կովկասյան լեզուներում, բայց դեռ չեմ գտել]։

Հոգնակի այդ մասնիկները անունների հոգնակի կոնկրետ զաղափարից բայածանցի մեջ հաճախ անցնում են գործողության շատության տևականության զաղափարին, այն է՝ անունների հոգնակերտական զաղափարից, այսպես ասած, բայաստեղծական զաղափարին։ Օրինակ՝ օրից բառարմատից հայերենում ունենք ձգ-ել բայը, որ հնում նշանակել է քաշել, երկարաց-նել, փռել, նետել (ըստ Առձեռն-ի)։ սրանից էլ-տ երբեմնի հոգնակի մասնիկով՝ ձգ-տ-ել ձևը, այսինքն՝ ձիգ-ձիգ քաշել, երկնցնել, մեծացնել կամ ճեղքել, երկնալ, տարածվել, ջանալ, ճապկտիլ (հորանջելով), համեմատել (նորից ըստ Առձեռն-ի)։ Իայց այսօր սրանք՝ ձգել և ձգտել (որից ե՛ ձգտում) միևնույն բայերը որպես առանձին բառեր են հանդես գալիս։ պարզ է, որ այսօր ձգել այլ բան է նշանակում, իսկ ձգտել այլ։ Այսպես նաև՝ կրն-ել ազդանքը կճրտել, կճրտացնել և կրն-տ-ել ազդայ կճրտացնել, սրել, մրմռալ, շծամել, ուտել ձևերը (ըստ Առձեռն-ի)։ բեկ-ել մաս-մաս՝ կտոր բրտում անել. կտրել, կտրել, պատռել բզբռել. ուժը կտրել, տկարացնել և բեկ-տ-ել չորս գիծն կտրտել (ըստ Առձեռն-ի)։... կամ թե չէ՝ կծ-ել և կրծ-ել (<*կծ-ր-ել ձևից՝ ր մասնիկի դրափոխությանը, հմմտ. ճղ-ել→ճղ-ր-ել→ճրգ-ել՝ շրթղ-բարբ.), պզ-ել և պլզ-ել (<*պռկ-ել<պոկ-ր-ել ձևից)։... և այլն։

Ոչ միայն բայածանցի, այլև անունների մեջ էլ հաճախ հոգնակի մասնիկները հանդես են գալիս նաև բառաստեղծական իմաստով։ Հայերենի հոգնակի մասնիկներից են, օրինակ, -ան և -ֆ, -Ան մասնիկով ունեցել ենք հոգնակի ձևեր, ինչպես, օրինակ՝ ձի-ան ձիեր, իշ-ան էշեր, իծ-ան աշներ և այլն, իսկ -ֆ մասնիկը զրարարի սովորական հոգնակի մասնիկներից է. այսպես, օրինակ՝ գիւղացի-ֆ գյուղացիներ, ձի-ֆ ձիեր, տուն-ֆ տներ։... և այլն։ Այս երկուսի միացումով՝ -ան+ֆ>-անֆ (>-այֆ) բաղադրյալ մասնիկով նմանապես, որ շատ սովորական է հայերենում, ունենք հոգնակի ձևեր, ինչպես, օրինակ՝ տեղ-ան+ֆ տեղեր, իշ-ան+ֆ էշեր, տեղ-ան+ֆ տեղեր, ձի-ան+ֆ ձիեր, լվ-ան+ֆ լվեր, Մարիամ-ան+ֆ Մարիամ և Մարթա Իղաբեր կանայք, բժշկ-ան+ֆ բժշկական բաներ (ըստ Առձեռն-ի)։... և այլն։ Այս նույն -անֆ բաղադրյալ հոգնակի մասնիկը, ինչպես նաև մյուս բոլոր հոգնակի մասնիկները, հանդես է գալիս նմանապես բառաստեղծական դերով՝ որոշ բառերից նոր բառաձևեր

ստեղծելով. օրինակ՝ «տեղ» բառից ունենք «տեղ-անգ». որ հնում նշանակել է «տեղեր» (ըստ «Առձեռն»-ի՝ «տեղիք, տեղուանք» հոգնակի). սա առաջինի համեմատ այսօր գործ էածվում որպես նոր («եզակի») բառակա տարրեր առումով. Այսպես նաև՝ տարրեր առումներով են գործածվում այսօր տակ լե տակ-տնգ, փորձ և փորձ-անգ, մերկ և մերկ-անգ (վերջինս նշանակել է «մերկություն, խայտառակություն» ըստ «Առձեռն»-ի), մորթ (սմորթի) և մորթ-անգ (սմորթ հանելը կամ մորթելը) ըստ «Առձեռն»-ի) զուրկ և զրկ-անգ... և այլն:

- օտի մասնիկով էլ հայերենում հոգնակի ձևեր են կազմվել. ինչպես, օրինակ՝ «ոսկր» բառից՝ ոսկր-օտի «ոսկորներ, ոսկրտանք» նշանակությամբ («Առձեռն»-ից). Այսպես նաև՝ «փոր» բառից՝ փոր-օտի «փորեր» պետք է նշանակեր, բայց սա՝ շնորհիվ -օտի հոգնակի մասնիկի՝ իմաստի այլ երանգավորում ստանալով ցույց է տալիս «փորուն միջին մասունքները, աղիքը. միջուկ, կուտ» (ըստ «Առձեռն»-ի). այսպես նաև՝ մեռել և մեռել-օտի, ծակ և ծակ-օտի, սիմ և սմ-օտի, ցունց և ցնց-օտի... և այլն:

Իմաստի տարրեր առումներով են հանգես գալիս նաև՝ ակ (|| ակ-ն) և ակ-ուն-գ, քե և քե-գ, հետ և հետ-գ, օլոր և օլոր-գ, բայց նաև՝ օլոր-տ. որից է՝ օլոր-տ-գ (այն է՝ «բոլորտիք, ամեն գիշեր կողմերը, շրջան. բոլոր աշխարհք» (ըստ «Առձեռն»-ի), ինչպես նաև՝ վրաց. տօջ-ո (թավ-ի «զլուխ») բառից՝ -ն հոգնակի մասնիկով՝ տօջ-ն-ո (թավ-ն-ի)՝ «դրամագլուխ», իսկ նույն բառը -աղ մասնիկով՝ տօջ-աղ-ո՝ (թավ-աղ-ի)՝ «զլխավոր, իշխան»... և այլն:

Այսպիսով, ուրեմն, կարելի է ասել, որ ընդհանրապես հոգնակի մասնիկները կարող են հանգես գալ կամ սկզբնական-հոգնակերտական իմաստով, կամ էլ՝ երկրորդական—բառաստեղծական իմաստով:

Այս տեսակետից էլ՝ չափազանց հետաքրքրական են երկու լեզվի ընդհանուր մասնիկների իմաստային փոխանցումները, նրանց բովանդակությամբ այն անընդհատ շարժումը, որի ընթացքում հաճախ հոգնակի մասնիկներն ընդհանրապես առարկաների հոգնակի գաղափարից անցնում են այլ առարկաների հատկանիշ ցույց տվող գաղափարին, և այսպիսով նրանք իրենց մեջ զարգացնելով երկրորդական, հատկանիշ ցույց տվող իմաստը, ի վերջո հանգում են իրենց հիմնական—առարկայական իմաստի բացասմանը (մի առարկայից մի այլ առարկայի հատկանիշ դառնալով):

Քիչ չեն նման օրինակներ. Հայտնի է, որ հայերենում հոգնակի գաղափարն արտահայտվել է նաև -անի || -եան մասնիկներով. ինչպես, օրինակ՝ «զլուխ» բառից՝ գլխ-անի || -գլխ-եան (վերջինս, օրինակ, զօրագլխեան

1 Վրց. (-ադ=) -եղ մասնիկով որոշ հոգնակի կամ հավաքական ձևեր պահպանված են վրացերենում, ինչպես, օրինակ՝ վրց. կար-ի «զուռ» բառից՝ կար-եղ-ի «դովի»... և այլն:

2 Հոգնակի մասնիկների հոգնակերտական գաղափարից բառաստեղծական գաղափարի անցման պրոցեսում, իսկ կարծիքով, նախ կառավարվում է հոգնակիության (կամ շատի՝ իրարից անհամ-անջատ լինելու) գաղափարից մի հավաքականության (կամ հավաքական մի կուռ միասնականության) գաղափարի անցում ե ապա, այստեղից էլ, բնականաբար, կառավարվում է բառաստեղծական գաղափարի դրսևորում, որպես ավյալ մեկից ավելի առարկաների հավաքականության, միասնականության կամ ամբողջականության մի գաղափարի դրսևորում: Ուստի այն հոգնակի մասնիկները, որոնք հոգնակի գաղափարից հավաքական գաղափարի անցում չեն կատարում, զրեթե բոլորովին էլ, բացի հոգնակերտական գաղափարից, բառաստեղծական գաղափար չեն կարող արտահայտել. այդպես են, օրինակ, մեր այսօրվա զբաղական հայերենի-նք և -ձեր հոգնակի մասնիկները... և այլն:

«զորագլուխներն ձևի մեջ» զլուխներն (հոգնակի) նշանակությամբ: Այսպես նաև՝ գիր և գր-եան (|| գր-եան + ք)՝ «գրեր || գրքեր», գեւգ և գեւդ-եան «գյուղեր», թուղթ և թղթ-եան «թղթեր, բարևագիրներ», էշ և իշ-եան (|| իշ-ան) «էշեր, իշվանք», խոզ և խոզ-եան «խոզեր», մոզ և մոզ-եան «սոգեր», ճանճ և ճանճ-եան «ճանճեր»... և այլն:

Այս նույն -եան մասնիկը, որ քարթվելական լեզուների -իան մասնիկի հետ, անշուշտ, նույնն է, սկզբնական — հոգնակերտական գաղափարից անցել է երկրորդական — բառաստեղծական գաղափարին, ինչպես, օրինակ՝ փող-եան նշանակում է «փողեր» (հոգնակի), բայց՝ հրկիտղ-եան (օրինակ՝ «երկիտղ-յան հրացան» արտահայտության մեջ) || երկիտղ-անի = վրց. «օրուլ-իան-ի»՝ նշանակում է «երկու փողեր ունեցող հրացան»: Այսպես նաև՝ գլխ-եան || գլխ-անի նշանակում է «զլուխներ» (հոգնակի), բայց՝ եթգլխ-եան || եթգլխ-անի (օրինակ՝ «եթգլխեան || եթգլխանի դե» արտահայտության մեջ) = վրց. «շվիթթավ-իան-ի»՝ նշանակում է «յոթ գլուխ ունեցող մի բան. ոստ-եան || ոստ-անի նշանակում է «ոստեր, ճյուղեր» (հոգնակի), բայց՝ բազմոստ-եան || բազմոստ-անի = վրց. «մրավալրտո-իան-ի»՝ «շատ ոստեր ունեցող մի բան (ասենք՝ ծառ)». ծաղկ-եան || ծաղկ-անի — վրց. «շվավիլ-իան-ի»՝ ցույց է տալիս նախ «ծաղիկներ» (հոգնակի) և ապա՝ «ծաղիկներ պարունակող» կամ «ծաղիկներ (որպես հատկանիշ) ունեցող մի բան... և այլն, ինչպես այդ ուրիշ հոգնակի գաղափար արտահայտող մասնիկների ղեպքում էլ է | օր.՝ աշ-ուի՝ «աշքեր» (հոգնակի) բառից ունենք՝ սև աշ-ուի (օր. «սև աշուի աղջիկ» արտահայտության մեջ), որ նշանակում է «սև աշքեր ունեցող». ընթ-ուի՝ «հոնքեր» (հոգնակի) բառից կենդնթ-ուի (օր. «կեն ռեռուի աղջիկ» արտահայտության մեջ)՝ «կեն հոնքեր ունեցող». դո-ուի՝ «դոներ» (հոգնակի) բառից՝ լեն դո-ուի (օր.՝ «լեն դուի շենք») «լայն դոներ ունեցող» և այլն:

Հյ. -եան և վրց. -իան մասնիկները իմաստային անցման հետ միասին նաև իրենց ձևական փոփոխությունն են կատարել, ինչպես, օրինակ՝ ծաղիկ → ծաղկ-եան → *ծաղկ-եան-փունջ (ծաղիկների փունջ), որից նախ՝ ծաղկ-եան-փունջ և ապա՝ ծաղկ-ե-փունջ (-եան > -եան)՝ > ե փոխանցումով): Այսպես նաև՝ վարդ → վարդ-եան → *վարդ-եան-փունջ (վարդերի փունջ), որից նախ՝ վարդ-եան-փունջ և ապա՝ վարդ-ե-փունջ, ինչպես նաև՝ բուրդ → բրդ-եան → բրդ-ե... և այլն:

Այս հնչյունափոխությունը յուրահատուկ է հայերենին. նույն -իան մասնիկը վրացերենում ենթարկվել է ուրույն փոփոխության, նախ՝ վերջից կորցրել է «ն» հնչյունը և դարձել -իա և ապա՝ սա էլ, որպես երկբարբառ, պարզանալով՝ տվել է -ա, ինչպես, օրինակ՝ վրց. տօց-ոօօ-ո (թավ-իան-ի «գլխ-եան || գլխ-անի») դառնում է նախ՝ տօց-ոօ (թավ-իա, օր.՝ դիդթավ-իա «մեծագլուխ || հաստագլուխ մեկը») և ապա՝ տօց-օ (թավ-ա, օր.՝ շվիթթավ-ա «յոթ գլխանի» մի բան)... և այլն:

Այսպիսով, ուրեմն, միևնույն աղբյուրից ծագող՝ հյ. -եան և վրց. -իան երբեմնի հոգնակի մասնիկները երկու լեզվում էլ հոգնակի գաղափարից

¹ -եան > -իան փոխանցման ղեպքում՝ ն > յ անցման կողքին կարելի է ենթադրել նաև՝ -եան մասնիկից նախ -ն հնչյունի անկումը, որ սովորաբար լինում է քարթվելական լեզուներում (> -եան), և ապա՝ վերջում՝ ձայնավորից հետո սովորաբար յ հնչյունի դարգացումը (> -եան):

անցնելով հատկանշի՝ կատարել են նաև ձևական այնպիսի փոփոխություն, որով այլևս նրանք իրար նման չեն. հյ. -ե մասնիկը, որ ծագում է -օայ<-եան ձևից, իրոք որ, նման չէ վրց. -օ (-ա) մասնիկին, որը նմանապես ծագում է -օս (-իա)<-օսն (-իան) ընդհանուր մասնիկից: Այստեղ՝ երկու լեզվում էլ պարզ է, որ նախորդ լեզուների միևնույն խաչավորման արդյունքը, ինչպես երևում է, հետագա ուրույն ձևավորում է ստացել, ըստ այդ լեզուների հնչյունական օրինաչափության:

Իմաստային անցումների շնորհիվ է, որ առանձին անկախ բառերը, այս կամ այն չափով, կորցնելով ինքնուրույնությունը, աստիճանաբար դառնում են նախ օժանդակ (=սպասարկու) բառեր և ապա՝ մասնիկներ ու ածանցներ: Օրինակ՝ հյ. «պիտի» բառը, որպես անկախ բառ, սկզբում նույնիսկ խոնարհվել է. ինչպես, օր.՝ պիտի-մ «պետք եմ», պիտի-ն «պետք ես», պիտի «պետք է»... Այնուհետև սա հանդես է եկել նախ՝ որպես օժանդակ բառ՝ մի այլ բառի (=բայի) կողքին, օր.՝ «պիտի տամ» կապակցություն մեջ, իսկ հետո սղվելով դարձել է՝ տի->տը- մասնիկը, օր.՝ (պիտի տամ>) տի-տամ>տը-տամ:

Այսպես նաև՝ կոյ մասնիկը, որ հանդես է գալիս նմանապես բայաձևի կողքին (օր.՝ կոյ տամ), որպես երբեմնի օժանդակ բառ-մասնիկ. սա, ինչպես կարծում եմ, ազգակից է քարթվելական (ճան.-մեգրելական) նույնապաշտոն յոն || յո (կոն || կո) մասնիկին, որ, ինչպես հայտնի է, ծագում է ոյոն (նկոն «պիտի») անկախ բառից (սկզբի «ո» հնչյունի սովորական անկումով՝ ճան.-մեգրելերենում ձայնավորով վերջացող բայից հետո)¹, ինչպես, օրինակ՝ ճան. ծ.Ֆյծ-յոն (բ-դումի-կոն<*բ-դումի-նկոն «չափեմ պիտի» ձևից) = հյ. չափեմ կոյ (>չափեմ կու>չափեմ կը), կամ ճան. ծ.Ֆյծ-յո-ո-յոն (բ-դում-տ-ի-կոն<*բ-դում-տ-ի-նկոն «չափեի պիտի» ձևից) = չափեի կոյ (>չափեի կու>չափեի կը)... և այլն:²

Կոն>կոյ մասնիկը (ն>յ փոխանցումով՝ հմմտ. գութան>կութայ, բաղբազանք>բաղբաղայք, ծաղկեան>ծաղկեայ, ասպուզան || ասպազան> ասպազայ «մի տեսակ լեռնային գեղեցիկ ծաղիկ»... և այլն), որպես երբեմնի մի անկախ (նկոն «պիտի») բառի հնչյունափոխված ձև, շարադասություն տեսակետից նախապես ազատ պետք է լիներ. նա կարող էր հանդես գալ բայի թե սկզբից և թե վերջից: Այդ է պատճառը, որ նա քարթվելական լեզուներում (ճան.-մեգրելերենում) սովորաբար բայի վերջից է պահպանված, իսկ հայերենում բայի թե վերջից (օր.՝ որոշ բարբառներում) և թե սկզբից (օր.՝ դրական նոր հայերենում), ինչպես նաև՝ միաժամանակ թե բայի սկզբից և թե վերջից (նույնպես բարբառներում):

Մի կողմից՝ (նկոն «պիտի»>կոն>) կոյ->կու->կը- || կ- և մյուս կողմից՝ (պիտի>) տի->տը- || տ- մասնիկներով հայերենում ունենք զուգակից բայաձևեր. ինչպես, օրինակ՝ մի կողմից կան (որոշ բարբառներում)՝ տ-երթամ (<*տը-երթամ <*տի-երթամ<*պիտի-երթամ ձևից) և մյուս կող-

¹ Մանավանդ որ սկզբի «ո» հնչյունի անկման դեպքերը հայերենում էլ կան նմանապես, ինչպես օր. ոչ>չ փոխանցումով՝ ո'չ է>չէ, ոչինչ>չինչ=*չինչ+ին>չնչին... (այլև «ու»-ի անկումն էլ՝ ուղարկել>ղարկել...) և այլն:

² Այս մասին առանձին հոդված ունեմ տպած, որտեղ ավելի մանրամասն եմ խոսում կը- մասնիկի մասին (տես՝ Հայկ. ՍՍԻ Գիտ. Ակադեմիայի «Տեղեկագիր», № 6—7, 1944, էջ 91—95):

մից՝ կ-երթամ (<կը-երթամ<կու-երթամ<կոյ-երթամ<*կոմ-երթամ<*ոկոմ երթամ «պիտի երթամ» ձևից)։ Այսպես նաև՝ տը-տամ և կը-տամ, տը-դար-նամ և կը-դարնամ, տ-ասեմ և կ-ասեմ... և այլն։

Այսպիսով, ուրեմն, կ- || կը- և տ- || տը- բայամասնիկները, որ իմաստային համարժեքներն են այսօր հայերենում (և նմանապես էլ սկզբում ընդհանուր «պիտի» նշանակությունն են ունեցել), ինչպես երևում է, ծագում են տարբեր, բայց միևնույն նշանակությունն արտահայտող, առանձին բառերից, որոնք, որպես անկախ բառեր, անշուշտ, խաչավորված ու ներդրված լինելով տարբեր լեզվախմբերից՝ դեռ այսօր էլ, այս կամ այն չափով, պահպանված են տարբեր լեզվախմբերում (ոկոմ «պիտի» բառը քարթվելական լեզուներում, իսկ պլրտի բառը՝ հայերենում)։ Այդ անկախ բառերը ժամանակի ընթացքում կորցնելով իրենց անկախությունը՝ հանդես են եկել նախ օժանդակ բառերի դերում և ապա հնչյունափոխվելով՝ դարձել են բայամասնիկներ որոշ լեզուների ու նրանց հատվածների համար։ Այս մասնիկները հետագայում ըստ տարբեր լեզուների ու նրանց հատվածների յուրահատուկ առումներ ու տարածում են գտել քարթվելա-հայկական լեզուներում։

Ձևա-իմաստային այս կարգի անցումները տեղի են ունենում լեզվի զարգացման բոլոր փուլերում՝ սկսած մարդկային մտածողության և նրա դրսևորման սկզբնական շրջաններից. առանց այդ անցումների շարժում, մտածողություն, լեզու չէր լինի։

Գրավոր շրջանում կատարված ձևա-իմաստային անցումները քննութային են առնվում գրական հուշարձանների և ընդհանրապես գրավոր փաստերի հիման վրա, իսկ նախագրավոր շրջանի անցումները՝ լեզվական հնագույն վերապրուկների հիման վրա, որոնք, այս կամ այն չափով, պահպանված են տարբեր բառաձևերում։ Այդպիսի բառաձևերով բավականաչափ հարուստ է և՛ հայերենը՝ մյուս կողմասյան լեզուների հետ միասին, որոնք հարեթական լեզուների անմիջական հետնորդներն են ու նրանց կենդանի վկաները։

Այդ վերապրուկները, որ գալիս են հնագույն շրջաններից՝ նախաարիական (հարեթական) լեզուներից, իրենց ձևա-իմաստային անցումներով չափազանց կարևոր են և պետք է հաշվի առնել մասնավորապես հայոց և վրաց լեզուների մասնիկների ու բառարմատների, որպես քերականական որոշ կարգերի, լուսաբանման համար էլ։

Հայոց և վրաց լեզուների ընդհանրությունների, որպես որոշ կարգի զուգակից լեզվատարների, համեմատական ուսումնասիրությունը շատ կարևոր է նաև զուտ հայոց լեզվի պատմության ուսումնասիրության տեսակետից էլ։ Հայոց մի շարք մասնիկներն ու բառարմատները, որ, իրոք, տեղական (հարեթական) ծագում ունեն, կարող ենք ճիշտ կերպով վերծանել միայն հարեթական լեզուների, մասնավորապես նրանց ժառանգ—քարթվելական լեզուների ընդհանուր տարրերի հետ համադրելով, առանց որի նրանց ստուգաբանությունը կամ բոլորովին չի կարելի, կամ էլ ճիշտ չի լինի։

Հայոց լեզվի բազմաթիվ իրողությունների լուսաբանման գաղտնիքների բանալին տալիս է ն. Մառը լեզվի նոր ուսմունքով։ Այդ բանալիով միայն հնարավոր է բանալ լեզվի բոլոր գաղտնիքները և թափանցել նրանց խորքերը։

А. Мурванян

Родство закавказских языков

РЕЗЮМЕ

Из закавказских языков армянские и грузинские языки известны как древние письменные языки, которые с рядом многих язычных своеобразий имеют также многочисленные общности. Эти общности выражаются как общими словами и корнями, так и частицами и аффиксами, число которых приблизительно составляет две-три тысячи.

Как надо объяснить такое множество общностей обоих языков?

Известно, что вообще общности частиц и аффиксов суть последствия не „заимствования“, а главным образом сближения, касания, смешения и перекрещения языков. С этой точки зрения общие частицы и аффиксы армянских и грузинских языков также есть последствия смешения и перекрещения языков, частицы которых дошли до нас из древнейших периодов.

Из древнейших периодов дошла до нас также большая часть общих слов и основ армянских и грузинских языков, которые связываются с первоначальным мышлением, взаимоотношений человеческого родства, животного мира, и скотоводства, так же первоначального земледелия и т. д.

Такие общности слов и основ—последствия, безусловно, касания, смешения и перекрещения языков.

Иначе говоря, это—такие общности, которые не могут быть „собственностью“ того или иного языка. Следовательно, эти общности нельзя объяснить „заимствованием“, как это объясняется у индоевропейцев.

Армянские языки, как одна группа языков смешанного типа, именно половиной своей природы, как говорит Н. Я. Марр, находятся в тесном родстве с яфетическими языками народов Кавказа, особенно с к'арт'скими языками (грузинским, ч'анским, мегрельским и сванским). К'арт'ские языки, как местные языки, действительно, находятся в тесном родстве, как говорит Н. Я. Марр, со слоем до-арийского (яфетического) языка Армении.

Ни один из соседних языков (даже ни один из индоевропейских языков) не имеет столько общностей с армянским, сколько к'арт'ские языки, особенно грузинский язык.

По этой причине Н. Я. Марр армянские и грузинские языки называет *родственными языками*. Он этот тезис выдвинул с самого начала и защитил до конца.

Как мы должны понимать так-называемое родство армянских и грузинских языков, и каким путем получено оно?

Это родство получено-ли путем разделения одного общего языка, как понимают некоторые, или путем сближения, слития и перекрещения языков?

Не трудно представить себе, что в древности тот или иной

язык, вследствие разных условий, мог разделиться на части и распасться. Таким образом эти части (одного языка), в течение веков, добиваясь некоторых особенностей, наконец, могли-бы существовать в разных местах, как отдельные языки. Но благодаря сохранным в себе так-называемым первоначальным общностям, эти части (одного языка) так или иначе, могли-бы быть в тоже время и родственными языками.

Такое родство языков возможно постольку, поскольку было бы возможно подобное разделение (языков). Это очень редкое явление в истории языков, так как от множества языков, как известно, мы исторически идем к малочисленности языков. С этой точки зрения можно сказать, что число языков, как видно, не умножилось, что следовало бы непременно, за явлением разделения языков, а, наоборот, уменьшилось (и наконец мы добьемся одного общего всемирного языка).

В общем процессе созидания языков морфологические единицы того или иного языка более сближаются друг с другом, смешиваются и сливаются, так как говорящие общества составляют более крупные язычные коллективы. В этом процессе на земном шаре от нескольких десятков или, вероятно, даже нескольких сотен тысяч языков теперь осталось менее двух тысяч языков и диалектов.

Таким образом, путь, ведущий от множества языков к малочисленности языков трудно представить без сближения, смешения, слияния и перекрещения языков. Этот путь прошли, более или менее, все языки мира, в том числе и закавказские языки, именно к'арт'ские и армянские языки.

Из истории языков известно, что тот или иной язык может исчезнуть или переобразоваться, или даже уничтожиться с уничтожением говорящего на этом языке язычного коллектива. Эта возможность, очевидно, нас ведет к убавлению числа языков. Если разделение языков связано с умножением числа языков, то присоединение и перекрещение языков, наоборот, связано с убавлением числа языков.

Процессы разделения и присоединения языков не отрицают друг-друга, они действуют более или менее рядом друг с другом.

Несмотря на это, тенденция присоединения (или перекрещения) языков всегда сильна, чем тенденция разделения. Таким образом число языков не прибавилось, а, наоборот, убавилось. Следовательно, общие язычные элементы возникли главным образом путем не разделения языков, а естественно путем приближения, соединения и перекрещения языков.

Этим путем получены также общности армянских и грузинских языков, общности, которые выражены как многочисленными словами и основами, так и частицами и аффиксами, которые рассмотрены в настоящем обзоре.